# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ........ 7

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 10

1.1 ՀԱՍՏԱՏՈՒԹԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ........ 10

1.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ........ 22

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 26

- 1.3.1 Համագործակցություն համայնքի հետ ........ 27
- 1.3.2 Համագործակցություն կրթության ոլորտում կառավարման մարմիններ հետ ........ 30
- 1.3.3 Համագործակցություն ծնողական համայնքի հետ ........ 31
- 1.3.4 Համագործակցություն շահառու կազմակերպությունների հետ ........ 32

1.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՍԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 34

- Կառավարման խորհուրդ. ........ 35
- Մանկավարժական խորհուրդ. ........ 36
- Մեթոդական միավորներ. ........ 37
- Ծնողական խորհորդ. ........ 39
- Աշակերտական խորհուրդ. ........ 40
- Հոգաբարձուների խորհուրդ. ........ 40

1.5 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 43

2. ՆՊԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........ 47

Վերջաբան ........ 107

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*«Կրթությունը ամենաhզոր զենքն է,*
*որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար:»*
*Նելսոն Մանդելա*

Մեր օրերում գիտելիքի և դպրոցի դերը և նշանակությունը առավել կարևոր են դարձել քան երբևէ՝ պայմանավորված ժամանակակից աշխարհում արագ տեխնոլոգիական առաջընթացով, շարունակաբար փոփոխվող հասարակական նորմերով և մարդկային հարմարվողականության շարունակական անհրաժեշտությամբ: Գիտելիքը ծառայում է որպես հիմք, որը հնարավորություն է տալիս անհատներին և հասարակությանը կառուցել ավելի լավ ապագա, իսկ դպրոցները առանցքային դեր են խաղում այդ գիտելիքը փոխանցելու և համայնքի և ընդհանուր արժեքների զգացումը խթանելու գործում:

Այսպես, տեխնոլոգիական նորամուծությունների աննախադեպ արագությամբ զարգացումը, արհեստական բանականությունը, ավտոմատացումը, կենսատեխնոլոգիան և թվային հաղորդակցությունը վերափոխում են հասարակական կյանքը: Այս ամենում կողմնորոշվելու համար անհատներին անհրաժեշտ է գիտելիքների ամուր բազա և սովորելու ու հարմարվելու հմտություններ: Դպրոցները, որպես ուսումնական հաստատություններ, ապահովում են միջավայր, որտեղ անձը կարող է ձեռք բերել և՛ հիմնարար գիտելիքներ, և՛ քննադատական մտածողության հմտություններ, որոնք անհրաժեշտ են այս դինամիկ աշխարհում բարգավաճելու համար:

2024 թվականին սովորական մարդուն հասանելի տեղեկատվության ծավալը հսկայական է, միաժամանակ հսկայական է ապատեղեկատվության ներուժը: Գիտելիքն օգնում է անհատներին տարբերակել փաստերը գեղարվեստական հորինվածքից, կայացնել հիմնավորված որոշումներ և ներգրավվել ժողովրդավարական գործընթացներում: Դպրոցները կենտրոնական դեր են խաղում մեդիա գրագիտության, քննադատական վերլուծության և հիմնավորված որոշումներ կայացնելու գործում՝ նպաստելով ավելի տեղեկացված հասարակության ձևավորմանը:

Քանի որ աշխարհն ավելի ու ավելի է փոխկապակցվում, դպրոցները կենսական նշանակության դեր են ձեռք բերում սոցիալական համախմբվածության և գլոբալ քաղաքացիության խթանման գործում: Գիտելիքը դուրս է գալիս ակադեմիական առարկաների շրջանակներից՝ ներառելով մշակութային ընկալումը, բարեվարքությունը և

բազմազանության կարևորությունը: Դպրոցը համախմբում է սոցիալական տարբեր խմբերին՝ խթանելով համայնքի զարգացումը և սովորեցնելով հարգանքի և համագործակցության արժեքները: Սա օգնում է կառուցել ավելի ներառական և ներդաշնակ հասարակություն, որտեղ տարբերություններն ընդունվում են:

2024 թվականին աշխարհը բախվում է բազմաթիվ գլոբալ մարտահրավերների՝ ներառյալ կլիմայի փոփոխությունը, հանրային առողջության ճգնաժամերը և սոցիալական անհավասարությունը: Այս բարդ խնդիրների լուծումը պահանջում է հավաքական գործողություններ և նորարարական լուծումներ: Դպրոցները զինում են գիտելիքներով և խնդիրներ լուծելու հմտություններով՝ այս մարտահրավերներին դիմակայելու համար: Ավելին, դպրոցը սերմանում է պատասխանատվության զգացում և աշխարհի վրա դրական ազդեցություն ունենալու պարտավորություն:

Փոփոխությունների տեմպը 21-րդ դարում նշանակում է, որ ուսումը չի դադարում, երբ ավարտվում է դպրոցը: Գիտելիքը և կրթությունը պետք է դիտարկվեն որպես կյանքի նպատակներ, որտեղ դպրոցները ծառայում են որպես ելակետ: Ակադեմիական առարկաներից բացի դպրոցները սովորեցնում են ուսանողներին, թե ինչպես սովորել, հարմարվել և լինել ճկուն փոփոխություններին: Այս մտածելակերպը կարևոր է արագ զարգացող աշխատաշուկայում անձնական աճի և կարիերայի զարգացման համար:

*Այսպիսով, մեր օրերում գիտելիքը և դպրոցը կենսական նշանակություն ունեն՝ տեխնոլոգիական առաջընթացին համընթաց քայլելու, տեղեկացված հասարակություններ կառուցելու, սոցիալական համախմբվածությունը խթանելու, գլոբալ մարտահրավերներին դիմակայելու և շարունակական կրթությունը խրախուսելու համար: Աշխարհին նայելով պարզ է դառնում՝ կրթությունը մարդկային ներուժը բացահայտելու և բոլորի համար ավելի լավ աշխարհ ստեղծելու բանալին է:*

Հայաստանի Հանրապետությունում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու զարգացման նախապայմաններից մեկը: Կրթությունը կարևորվում է, որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ ազգային անվտանգության, կայուն տնտեսական զարգացման, աղքատության հաղթահարման, ժողովրդավարական հասարակության զարգացման, գիտելիքահեն տնտեսության կայացման, լուծման առանցքային գործոններից մեկը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և

համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է[1]:

Կրթական ոլորտի զարգացումը որպես պետական քաղաքականություն հռչակվել է նաև «Հանրակրթության մասին» օրենքով, որի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք[2]:*

Կրթությունը կայուն, ներառական զարգացման և բարեկեցության հասնելու գործում որպես գերակա ոլորտ է դիտարկվում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը: Այսպես, մարդկանց գիտելիքների և հմտությունների ուղղությամբ ներդրումները երկրի զարգացման գրավականն են: Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը[3]:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ցանկանում ենք ընդգծել, որ հաշվի առնելով ժամանակակից աշխարհի համատեքստում հասարակական փոփոխությունները արտացոլող, երիտասարդ սերնդին ապագային նախապատրաստող, քննադատական մտածողությունը խթանող դպրոցի կարևորությունը, ակնհայտ է դառնում հանրակրթական հաստատության զարգացման ծրագրի արդիականությունը: Դպրոցը այն վայրն է, որտեղ ձևավորվում են նոր արժեքներ, գիտելիքներ և հմտություններ, որոնք կենսական անհրաժեշտություն են տեխնոլոգիական և սոցիալական փոփոխությունների պայմաններում: Դպրոցների մասին քննարկումները օգնում են հասկանալ, թե ինչպես է կրթությունը հարմարվում ժամանակակից մարտահրավերներին և ինչ միտումներ են ազդում ուսման ապագայի վրա:

Սույն զարգացման ծրագրի օբյեկտ է հանդիսանում հանրակրթական դպրոցը, ինչպես նաև դպրոցում ուսումնառության կազմակերպման գործընթացը: Ուսումնասիրության առարկա է հանդիսանում ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման և վերահսկողության գործընթացների ուսումնասիրությունը: Հանգամանալից ուսումնասիրվել են, ինչպես նաև վերլուծության են ենթարկվել ոլորտին

---

[1] Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մաս. Ընդունման ամսաթիվ՝ 14.04.1999
[2] Տե՛ս «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս. Ընդունման ամսաթիվ՝ 10.07.2009
[3] Տե՛ս 18 նոյեմբերի 2021 թվականի N 1902-Լ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում. Հավելված 1

վերաբերող մի շարք իրավական ակտերը, համացանցային և տեսական աղբյուրներ, քննարկվել են ուսումնական հաստատության որոշ խնդիրներ, և ռիսկերի հաշվարկմամբ փորձ է կատարվել առաջարկել դրանց հնարավոր լուծումները։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ագարակ գյուղը հիմնադրվել է 1811 թվականին, գտնվում է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքից դեպի արևելք՝ 10 կմ հեռավորության և ծովի մակարդակից 1354 մ բարձրության վրա։ Համայնքի վարչական տարածքը կազմում է 1931 հա, ունի 1487 բնակիչ, որոնց հիմնական  եկամտի աղբյուրներն են հողագործությունը և անասնապահությունը։

Ագարակ գյուղում առաջին պետական տարրական դպրոցը հիմնադրվել է 1922-23 ուսումնական տարում: 1926-27 ուսումնական տարում  ձևավորվել  է 7-ամյա դպրոց, որտեղ հաճախել են նաև հարևան գյուղերի շատ երեխաներ։ Դպրոցը միջնակարգ է դարձել 1938-39 ուսումնական տարում։ Դպրոցի 300 շրջանավարտներ մասնակցել են Հայրենական Մեծ պատերազմին, նրանցից 156-ը զոհվել են մարտի դաշտում։ 90-ական թվականներին աշակերտների թիվը հասնելով 420-ի՝ կոմպլեկտավորվել են զուգահեռ դասարաններ։ Համայնքում միշտ էլ բարձր են պահվել ուսման հարգն ու պատիվը։  Եվ մինչև օրս էլ գործում է հանրապետությունում բարի համբավ վայելող միջնակարգ դպրոցը, որի նոր դպրոցական շենքը շահագործման է հանձնվել 2000-2001 ուսումնական տարում։

«ՀՀ  Լոռու մարզի Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը պետական ռեգիստրում գրանցում է ստացել 2003 թվականի հունվարի 22-ին։ Դպրոցն ունի հանրակրթական ծրագրերի իրականացման  լիցենզիա՝ տարրական, հիմնական և միջնակարգ կրթությամբ, որն ստացել է 30.05.2011 թվականին։ Այնտեղ աշխատում են բարձրագույն մանկավարժական կրթությամբ  26 ուսուցիչներ։ Աշխատողների ընդհանուր թիվը՝ 35-ն է, որից 3-ը՝համատեղությամբ։ Ներկայումս դպրոցի վերջին տարիների շրջանավարտներից 31-ը սովորում են հանրապետության տարբեր  պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում։

Դպրոցի հիմնադրման օրից մինչ օրս մաժնկավարժական կոլեկտիվը ղեկավարել են տնօրեններ՝

| **1. Ա. Ջիլավյան** | **1935 -1940 թթ.** | **5 տարի** |
|---|---|---|
| **2. Ս. Գագիկյան** | 1940-1951 թթ. | 11 տարի |
| **3. Ս. Թունյան** | 1951–1962 թթ. | 11 տարի |
| **4. Ա. Հարությունյան** | 1962–1968 թթ. | 6 տարի |
| **5. Ա. Բարխուդարյան** | 1968–1986 թթ. | 18 տարի |

| | | |
|---|---|---|
| **6. Հ. Մելիքջանյան** | 1986 -2014 թթ. | 28 տարի |
| **7. Հ. Վարդումյան** | 2014թ-2024 թթ. | 10 տարի |

Ստորև ներկայացված աղյուսակը[4] պարունակում է առավել մանրամասն տեղեկություններ դպրոցի վերաբերյալ:

| | |
|---|---|
| **Դպրոցի անունը** | «ՀՀ Լոռու մարզի Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ |
| **Հիմնադրման տարեթիվը** | 1922-1923 թթ. ուսումնական տարի: Միջնակարգ է դարձել 1938-1939 թթ.-ին:<br>Նոր շենքը հիմնադրվել է 2001 թ. |
| **Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական պետռեգիստրի կողմից տրված վկայական** | 92.210.00461 գրանցման համար |
| **Անշարժ գույքի գրանցումը** | 22.01.2003 թ. |
| **Կանոնադրությանհաստատման գրանցման թիվ** | 25.10.2010 թ., փոփոխությունների է ենթարկվել 2017 թվականին |
| **Լիցենզիայի հրաման** | 30.05.2011 թ. |
| **Տարրական հանրակրթական ծրագիր** | 70-N 0231 |
| **Հիմնական հանրակրթական ծրագիր** | 100- N 0225 |
| **Միջնակարգ հանրակրթական ծրագիր** | 60-N 0188 |
| **Հասցե** | Լոռու մարզ, գ. Ագարակ, փ. 1, շ. 44 |
| **Դպրոցի էլեկտրոնային փոստի հասցե** | lagarak@mail.ru |
| **Դպրոցական կայքի հասցե** | https://agarakl.schoolsite.am/ |
| **Ֆեյսբուքյան սոցիալական կայքի հասցե** | Ագարակի միջնակարգ դպրոց Լոռի |
| Բնութագիր | |
| **Դասերի սկիզբ, ավարտ** | 9:00-14:50, երկարօրյա՝ մինչև 15:35 |
| **Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածություն** | 19,05 |
| **Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցություն** | 6, 25 |
| **Դասարանների միջին խտություն** | 10,4 |

[4] Տե՛ս https://agarakl.schoolsite.am/

| | |
|---|---|
| Ղեկավար և վարչական աշխատող | 2 |
| Ուսուցիչներ | 19 |
| Ուսուցչի օգնական | 1 |
| Հոգեբան | 1 |
| Դաստիարակ | 1 |
| ԴԱԿ | 1 |
| Ջինդեկ | 1 |
| Աշխատողների ընդհանուր թիվը | 39 |
| Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ | 13 |
| Բարձրագույն կրթությամբ մանկավարժներ | 26՝ բոլորը |
| Հիմնական ուսուցիչներ | 15 |
| Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 5 |

# 1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1 ՀԱՍՏԱՏՈՒԹԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐՈԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախ և առաջ քննարկման առարկա ենք ցանկանում դարձնել ուսումնադաստիարակչական աշխատանքների բնույթն ու էությունը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի բնույթը քննարկելիս կարող ենք առանձնացնել հետևյալ գործառույթները.

1. Նոր ՀՊՉ-ի ներդնում, և դրա արդյունքում կրթության որակի բարելավում:
2. Յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքների բավարարում և դրան նպաստում:
3. Ձեռք բերված ուսումնառության արդյունքների ցուցանիշների բարձրացում:
4. Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան ուսուցման բարձր որակի ապահովում:
5. Համընդհանուր ներառական կրթության իրականացում:
6. Սոցիալ-մշակութային միջոցառումների՝ դպրոցի ակտիվ ներգրավվածության ապահովում:
7. Ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ աշխատանքների ապահովում:
8. Ուսուցիչների մասնակցության ապահովում տարբեր սեմինարների, վեբինարների, վերապատրաստումների՝ կրթության որակի բարելավման և կարողությունների զարգացման նպատակով:
9. Դպրոցում առկա ավանդույթների շարունակականության ապահովում և նորերի ձևավորում:
10. Ուսուցման նոր մեթոդների իմացություն և կիրառում՝ համամարդկային, ազգային արժեքների վրա ձևավորված կրթության և դաստիարակության կազմակերպում:
11. Աշակերտի մոտեցումների և ընկալման փոփոխություն կրթության նպատակի վերաբերյալ:

Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների որակական և քանակական արդյունքների վերլուծության համար ցանկանում ենք նախ ներկայացնել վերջին 3 տարիների որոշ քանակական տվյալներ.

*<u>Աղյուսակ 1.</u> Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուսումնական տարիների համար*

| Դասարանների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 1 | 1 | 1 | - |
| 2-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 3-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 4-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 5-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 6-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 7-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 8-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 9 -րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 10 -րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 11 -րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| 12-րդ դասարան | 1 | 1 | 1 | - |
| Ընդամենը | 12 | 12 | 12 | |

*Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Սովորողների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 13 | 9 | 9 | Նվազում |
| 2-րդ դասարան | 13 | 12 | 10 | Նվազում |
| 3-րդ դասարան | 10 | 13 | 12 | Աճ |
| 4-րդ դասարան | 8 | 9 | 13 | Աճ |
| 5-րդ դասարան | 13 | 8 | 10 | Նվազում |
| 6-րդ դասարան | 10 | 13 | 8 | Նվազում |
| 7-րդ դասարան | 8 | 10 | 13 | Աճ |
| 8-րդ դասարան | 12 | 8 | 10 | Նվազում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **9-րդ դասարան** | 10 | 12 | 8 | Նվազում |
| **10 -րդ դասարան** | 11 | 9 | 12 | Աճ |
| **11 -րդ դասարան** | 8 | 13 | 10 | Աճ |
| **12-րդ դասարան** | 13 | 8 | 12 | Նվազում |
| Ընդամենը | **129** | **124** | **127** | **Նվազում** |

*Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ երկու ուսուսմնական տարիների համար*

| Ցուցանիշը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխություններ ի դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| **Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ** | 129 | 124 | 127 | Նվազում |
| **Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ** | 128 | 123 | 118 | Նվազում |
| **Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը** | 13 | 9 | 9 | Նվազում |
| **Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը** | 1 | 2 | 3 | Աճ |

Այսպիսով, 2023-2024 թթ. ուսումնական տարում **դպրոցում** սովորում են 129 աշակերտ, ինչպես նաև դպրոցի վերաբերյալ հրապարակված այլ տեղեկություններից հայտնի է դառնում, որ ուսումնական հաստատության **նախակրթարանում** սովորում է 15 սան, որոնց ուսումնառությունը կազմակերպվում է դպրոցի կարգականոնին համապատասխան:

Ուսումնական հաստատությունը ունի **15 գերազանց սովորող աշակերտ**: Բացակայում են չառաջադիմող կամ երկտարեցի, պարտուսից դուրս մնացած աշակերտները:

**ԿԱՊԿՈՒ** սովորող աշակերտների թիվը **12-ն** է, ովքեր ստանում են աջակցություն ՏՄԱԿ-ի կողմից: Դպրոցում գործում է մանկավարժահոգեբանական թիմ, որը ցուցաբերում է իր աջակցությունը նշված երեխաներին:

<u>Ցանկանում ենք նշել, որ աշակերտների թվաքանակը, դրա աճը և նվազումը պայմանավորված է գյուղական բնակավայրի առանձնահատկություններով, կրում է օբյեկտիվ բնույթ, աշակերտների թվաքանակի փոփոխությունը պայմանավորված չէ ուսումնական հաստատության որակական հատկանիշներով:</u>

*<u>Աղյուսակ 4.</u> ԿԱՊԿՈՒ երեխաների վերաբերյալ տվյալներ՝ 2023-2024 տարիներ*

| *N* | *Աշակերտ* | *Գնահատում* | *Գնահատման ամսաթիվ* | *Դասարան* |
|---|---|---|---|---|
| 1 | Բաբայան Արտյոմ Միհերի | *Ինտելեկտի (մտավոր) (2-րդ աստիճան)* | *2023-12-25* | *3-րդ* |
| 2 | Արգիշտի Չոբանյան Անդրանիկի | *Ինտելեկտի (մտավոր) (2-րդ աստիճան)* | *2023-05-19* | *4-րդ* |
| 3 | Անահիտ Վերմիշյան Արամի | *Ինտելեկտի (մտավոր) (2-րդ աստիճան)* | *2023-06-21* | *5-րդ* |
| 4 | Աղավնի Ջիլավյան Յուրիի | *Խոսքի և լեզվի (1-ին աստիճան)* | *2023-06-21* | *5-րդ* |
| 5 | Մարկ Աբովյան Ռազմիկի | *Ինտելեկտի (մտավոր) (2-րդ աստիճան)* | *2023-06-21* | *5-րդ* |
| 6 | Գոռ Չատինյան Գևորգի | *Ինտելեկտի (մտավոր) (2-րդ աստիճան),* | *2023-06-21* | *5-րդ* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | *հուզական (2-րդ աստիճան)* | | |
| **7** | Նարե Չոբանյան Արամի | *Շարժունակության (3-րդ աստիճան)* | *2023-05-19* | *6-րդ* |
| **8** | Արմենուհի Հովհաննիսյան Արայիկի | *Ինտելեկտի (մտավոր) (1-ին աստիճան)* | *2023-05-19* | *6-րդ* |
| **9** | Բաբայան Մարատ Միհերի | *Ինտելեկտի (մտավոր) (3-ին աստիճան)* *Վարքի (3-րդ աստիճան)* | *2023-12-25* | *7-րդ* |
| **10** | Աննա Հովհաննիսյան Արայիկի | *Ինտելեկտի (մտավոր) (2-րդ աստիճան)* | *2023-05-19* | *8-րդ* |
| **11** | Օքսաննա Շահբազյան Արայիկի | *Ինտելեկտի (մտավոր) (1-ին աստիճան)* | *2023-05-19* | *8-րդ* |
| **12** | Դավիթ Մխիթարյան Հովհաննեսի | *Ինտելեկտի (մտավոր) (3-րդ աստիճան)* | *2023-05-15* | *12-րդ* |

Առավել ծանր աստիճանի խնդիր ունեցող ԿԱՊԿՈՒ երեխաները հիմնական ուսումնառությունը ստանում են տնային պայմաններում, որի կազմակերպումը իրականացվում է դպրոցի և դպրոցի մանկավարժների կողմից:

Ուսումնական հաստատությունը ունի հոգեբան, սոցիալական մանկավարժ և ուսուցչի օգնական, որոնց գործառույթներից է նաև ԿԱՊԿՈՒ երեխաների հետ հատուկ աշխատանքը:

<u>ԿԱՊԿՈՒ երեխաների հետ հատուկ աշխատանք տանելու և ուսումնառության հատուկ ձևերի կազմակերպման պարտավորությունների սահմանումը չպետք է կրի ինքնանպատակի բնույթ, դրա նկատմամբ պետք է իրականացվի շարունակական հսկողություն (տնայցեր, դասալսումներ, անհատական զրույցներ աշակերտի և ընտանիքի</u>

հետ) նման աշակերտների՝ դպրոցի կյանքին ներգրավվածության և սոցիալիզացիայի ապահովման նպատակով։

*Աղյուսակ 5. Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուստարիների համար՝ըստ կրթական աստիճանների*

| Ցուցանիշ | 2020-2021 ուստարի | | | 2021-2022 ուստարի | | | 2022-2023 ուստարի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1-ից 4-րդ. դաս. | 5-ից 9-րդ. դաս. | 10-ից 12-րդ. դաս. | 1-ից 4-րդ. դաս. | 5-ից 9-րդ. դաս. | 10-ից 12-րդ. դաս. | 1-ից 4-րդ. դաս. | 5-ից 9-րդ. դաս. | 10-ից 12-րդ. դաս. |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկանգնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 5<br>16% | 10<br>18,9% | 1<br>3,1% | 7<br>26% | 8<br>13,3% | 1<br>3,3% | 9<br>25,7 % | 5<br>9,8% | 1<br>3,4 % |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ըստ կրթական աստիճանների | 3% | 11.5% | 4% | 3% | 10.2% | 2% | 2.1% | 9.4% | ------ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «4, «5 և «6 տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | | | | | | | | | |
| Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ (տոկոսի հաշվարկ. 12-րդ դասարանի շրջանավարտներից միասնական քննություններին մասնակիցների թվիհարաբերությունը շրջանավարտների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) *Լրացնել միայն 12-րդ դասարանի համար* | -- | -- | 5<br>41,6 % | -- | -- | 6<br>75% | -- | -- | 8<br>66% |

*<u>Աղյուսակ 6.</u> Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ նախորդ ուստարում /2021-2022/*

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Հիմնական առարկաների ցտարեկան գնահատականների միջինը | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննություններիքննությունների միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու | | 12 | 8 | | 6,9 | 7,3 | | | 14,3 |
| Մաթեմատիկա | 9 | 12 | 8 | 7,5 | 7,1 | 5,9 | 8,2 | 6,5 | 12,4 |
| Ռուսաց լեզու | | 12 | 8 | 7,2 | 7,3 | 7,6 | | 8,1 | |
| Աշխարհագրություն | | 12 | 8 | | 8 | 5,9 | | 6,4 | |
| Հայոց պատմ. | | 12 | 8 | | 6,4 | 7,3 | | 16,5 | 13,7 |
| Անգլերեն | | 12 | 8 | 6,3 | 7,3 | 7,5 | | | |
| Մայրենի | 9 | 12 | 8 | 8,5 | | | 8,4 | | |
| կենսաբ | | 12 | 8 | | 6,5 | 7 | | 6,2 | |
| գրականություն | | 12 | 8 | | 7,4 | 7,4 | | | |
| Ֆիզիկա | | 12 | 8 | | 6,5 | 7 | | 7,2 | |
| Քիմիա | | 12 | 8 | | 7,1 | 7 | | | |
| ինֆորմատիկա | | 12 | 8 | | 7,2 | 8 | | | |
| ՆԶՊ | | 12 | 8 | | 8,5 | 9 | | | |
| ՀԵՊ | | 12 | 8 | | 8,1 | 8,4 | | | |
| բնություն | | 12 | 8 | | | | | | |
| երաժշտություն | 9 | 12 | 8 | 8,4 | | | | | |
| կերպարվեստ | 9 | 12 | 8 | 8,5 | | | | | |
| տեխնոլոգիա | 9 | 12 | 8 | 8,5 | | | | | |
| ես և շրջ. աշխ | 9 | 12 | 8 | 7,6 | | | | | |
| հայրենագիտ. | | 12 | 8 | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **բնագիտություն** | | 12 | 8 | | | | | | |
| **հ. աշխարհ** | | 12 | 8 | | 8,2 | | | | |
| **համ. պատմութ** | | 12 | 8 | | 6,8 | 6,7 | | | |
| **հասարակագիտ** | | 12 | 8 | | 8 | 6,6 | | | |
| **հանրահաշիվ** | | 12 | 8 | | 6,8 | 7 | | | |
| **երկրաչափութ.** | | 12 | 8 | | 6,7 | 6,9 | | | |
| **ֆիզկուլտուրա** | 9 | 12 | 8 | 9 | 9 | 9 | | | |
| **շախմատ** | 9 | 12 | 8 | 7 | | | | | |

Ուսումնական հաստատության աշակերտների առաջադիմության ցուցանիշները պայմանավորվում են և սուբյեկտիվ և օբյեկտիվ հատկանիշներով: Գտնում ենք, որ դրանց մաս են կազմում դասավանդման մեթոդոլոգիան, նոր ՀՊՉ-ների արդյունավետ ներդրումը, նոր տեխնոլոգիաների օգտագործումը, մանկավարժների շարունակական վերապատրաստումը, ինչպես նաև ակադեմիական գիտելիքների տրամադրմանը զուգահեռ նաև աշակերտի՝ որպես հասարակության ապագա լիարժեք անդամի դաստիարակումը, այնպիսի որակների ներդրումը և զարգացումը, ինչպիսիք են ինքնակրթությունը, քննադատողական մտածողությունը, բարձր իրավագիտակցությունը, ինքնաքննադատողականությունը և արդարամտությունը:

Այսպես, զարգացող հասարակական կյանքին նախապատրաստումը չպետք է լինի զուտ տեսական մակարդակում, այլ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ստանալ գործնական հմտություններ նոր տեխնոլոգիաների հետ ամենօրյա առնչման միջոցով:

Մանկավարժական անձնակազմի որակավորման բարձրացումը պետք է խթանվի, սակայն չպետք է բավարարվի միայն ընդհանուր վերապատրաստումներով, այլ պետք է իրականացվեն ուսուսմանական հաստատության ներսում պարբերական ստուգումներ և ուսումնասիրություններ խնդիրների վերհանման համար, և դրա արդյունքում պետք է կազմակերպվեն դասընթաց-քննարկումներ, խորհրդատվություններ նոր գիտելիքների ձեռքբերման համար, որի արդյունքների նկատմամբ նույնպես պետք է իրականացվի վերահսկողություն:

*Աղյուսակ 7. Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ տվյալ ուսումնական տարում /2022-2023/*

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| հայոց լեզու | | 8 | 12 | | 6,5 | 7,6 | | 14,6 | 14,3 |
| մաթեմատիկա | 11 | 8 | 12 | 7,6 | 7 | 6,3 | 7,4 | 6,5 | 12,4 |
| ռուսաց լեզու | 11 | 8 | 12 | 7,2 | 7,6 | 7,1 | | 8,1 | |
| աշխարհագրութ. | | 8 | 12 | | 6,8 | 5,8 | | 6,4 | |
| հայոց պատմ. | | 8 | 12 | | 7 | 7,1 | | 16,5 | 13,7 |
| Անգլերեն | 11 | 8 | 12 | 6,5 | 7,3 | 7,4 | | | |
| Մայրենի | 11 | 8 | | 8 | | | 7,9 | | |
| Կենսաբ | | 8 | 12 | | 6,5 | 7 | | 6,2 | |
| գրականություն | | 8 | 12 | | 8 | 7,4 | | | |
| Ֆիզիկա | | 8 | 12 | | 6,3 | 7 | | 7,2 | |
| Քիմիա | | 8 | 12 | | 7,8 | 7 | | | |
| ինֆորմատիկա | | 8 | 12 | | 8,2 | 8,1 | | | |
| ՆԶՊ | | 8 | 12 | | 8,5 | 8,5 | | | |
| ՀԵՊ | | 8 | 12 | | 8 | 8,5 | | | |
| Բնություն | | 8 | 12 | | | | | | |
| երաժշտություն | 11 | 8 | 12 | 8,4 | | | | | |
| կերպարվեստ | 11 | 8 | 12 | 8,5 | | | | | |
| տեխնոլոգիա | 11 | 8 | 12 | 8,5 | | | | | |
| ես և շրջ. աշխ | 11 | 8 | 12 | 6,6 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **հայրենագիտ.** | | 8 | 12 | | | | | | |
| **բնագիտություն** | | 8 | 12 | | | | | | |
| **հ. աշխարհ** | | 8 | 12 | | 8,1 | | | | |
| **համ. պատմութ** | | 8 | 12 | | 7,6 | 6,7 | | | |
| **Հասարակագիտ** | | 8 | 12 | | 7,9 | 6,4 | | | |
| **հանրահաշիվ** | | 8 | 12 | | 6,8 | 7,1 | | | |
| **երկրաչափութ.** | | 8 | 12 | | 6,7 | 6,9 | | | |
| **ֆիզկուլտուրա** | 11 | 8 | 12 | 9 | 9 | 8,7 | | | |
| **Շախմատ** | 11 | 8 | 12 | 7 | | | | | |

Համապատասխան նոր ՀՊՉ-ի պահանջների, որը ներդրվել է 2023-2024 թվականների ուսումնական տարում, 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում իրականացվել են նախագծային աշխատանքներ, հիմնվել են խմբակներ, ինչը կխթանի ուսուցման գործընթացը, իսկ ուման մեջ թերացող աշակերտները շնորհիվ երկարօրյա ուսուցման ստանում են աջակցություն թերությունները վերացնելու և կարողունակությունները զարգացնելու ուղղությամբ:

2023-2024 թվականների ուսումնական տարվա առաջին կիսամյակից դպրոցում իրականացվել է նախագծային ուսուցում, և կազմակերպվել են խմբակների գործունեություն: Վերջիններիս գործունեությունը ներկայացվում է ստորև աղյուսակի տեսքով:

| Խմբակ | Երկարօրյա ուսուցում | Նախագծային ուսուցում |
|---|---|---|
| **1. Կյանքի հմտություններ (1ժ), առողջ ապրելակերպ (1ժ)- 7-րդ դասարան** | 1. Հայոց պատմություն (1ժ), հանրահաշիվ և երկրաչափություն(1ժ), հայոց լեզու (1ժ)- 7-րդ դասարան | 1. «Բնակավայրիս ղեղաբույսերը»- Մարգարիտա Մեհրաբյան (կենսաբանություն) |
| **2.Առողջ ապրելակերպ (1ժ), ընթերցանության տեխնիկա (1ժ)-5-րդ դասարան** | 2.Մաթեմատիկա (1ժ), մայրենի (1ժ), իմ հայնէրիքը (1ժ)-5-րդ դասարան | 2. «Հայկական զարդանախշեր»- Լուսինե Բալայան (տեխնոլոգիա) |

| | | |
|---|---|---|
| **3. Խոսքի զարգացում (1ժ), սովորում ենք ընթերցելով (1ժ)- 2-րդ** | 3. Մաթեմատիկա (1ժ), մայրենի (1ժ)- 2-րդ դասարան | |

Նախորդ տարիներին դպրոցի աշակերտները մասնակցել են մի շարք մրցույթների, որոնցից են «Կենգուրու», «Մեղու», «Медвеженок», ասմունքի և մի շարք այլ մրցույթների: Այս ուսումնական տարում նրանց հետաքրքրությունների շրջանակը ընդլայնվել է՝ ի շնորհիվ «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից կազմակերպված «Մոլորակն ունի իմ ու քո օգնության կարիքը», «Իմ կյանքը համայնքում 5», «Koreez» մրցույթների:

Նշենք, որ ներկայացված խմբակները ի սկզբանե կազմվել են նոր ՀՊՉ առաջարկներին համապատասխան, սակայն գտնում ենք, որ ժամանակի ընթացքում խմբակների գործունեությունը պետք է կազմակերպվի հաշվի առնելով աշակերտների նախասիրությունները և հետաքրքրությունների շրջանակը, ինչպես նաև պետք է իրականացվի շարունակական մոնիթորինգ և հսկողություն, որը կապահովվի խմբակների՝ նպատակային նշանակության ծառայելը: Միևնույն ժամանակ պետք է տարվեն աշակերտների՝ խմբակներին ներգրավվածության բարձրացման ուղղությամբ աշխատանքներ:

## 1.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Մանկավարժական համակազմը համալրված է մեծամասամբ երկար տարիների փորձառությամբ մասնագետներով, որոնք փորձառությանը զուգահեռ ժամանակ առ ժամանակ անցնում են տարբեր մասնագիտական կարիքների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ և դասընթացներ, ինչը հնարավորություն է տալիս համադրելու փորձը նորարական մեթոդների հետ: Դպրոցի մանկավարժական համակազմը բաղկացած է 26 ուսուցիչներից, որոնք բոլորը ունեն բարձրագույն կրթություն: Թվով 2 ուսուցիչ անցել են կամավոր ատեստացիա «Անգլերեն» և «Նախնական զինվորական պատրաստավածություն» առարկաների շրջանակում:

Դպրոցի բոլոր ուսուցիչները մասնակցել են Հանրակրթական պետական չափորոշիչների (ՀՊՉ) վերապատրաստումներին: Յուրաքանչյուր ուսուցիչ 5 տարին մեկ հաճախականությամբ անցնում է հերթական ատեստացիա:

Ստորև ներկայացվում է վերջին 3 տարվա հերթական ատեստացիա անցած ուսուցիչների թիվը:

| Ատեստավորված ուսուցիչներ | |
|---|---|
| **Ուսումնական տարի** | **Ուսուցիչների թիվ** |
| 2021-2022 | 3 |
| 2022-2023 | 5 |
| 2023-2024 | պետք է վերապատրաստվեն 3 ուսուցիչ |

| **Մանկավարժական համակազմը** | | |
|---|---|---|
| **1** | Ուսուցիչներ | 26 |
| **2** | Զինղեկ և քաղպաշտպանություն | 1 |
| **3** | Հոգեբան | 1 |
| **4** | Գրադարանավար | 1 |
| **5** | Ուսուցչի օգնական | 1 |
| **6** | Դաստիարակ | 1 |

*<u>Աղյուսակ.</u> Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Ուսուցիչների թիվն ըստ տարիքի | | | |
|---|---|---|---|
| **Ուսուցիչնների թիվը** | 2021-2022 ուսումնական տարի | 2022-2023 ուսումնական տարի | 2023-2024 ուսումնական Տարի |
| Մինչև 30 տարեկան | 2 | 3 | 3 |
| 31-ից 40 տարեկան | 4 | 4 | 4 |
| 41-ից 50 տարեկան | 5 | 5 | 5 |
| 51-ից 55 տարեկան | 7 | 7 | 7 |
| 56 տարեկան և ավելի | 7 | 7 | 7 |

Վերջին չորս տարիների ընթացքում պայմանավորված «COVID-19» համավարակի հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակով ուսուցիչները կարողացել են իրականացնել հեռավար ուսուցում սկզբնական շրջանակում «Zoom», իսկ հետագայում նաև «MS Teams» հարթակների միջոցով: Ուսուցիչները յուրաքանչյուր տարի անցնում են մասնագիտական որակների զարգացման վերապատրպստումներ, և ուսուցչական համակազմի 20 տոկոսը յուրաքանչյուր տարի մասնակցում է հերթական ատեստավորման:

«ԿԶՆԱԿ»-ի կողմից իրականացված նոր ՀՊՉ վերապատրաստումներին մասնակցած ուսուցիչները այսօր էլ մշտապես շարունակում են համագործակցել և մասնակցել «ԿԶՆԱԿ»-ի, «ԿՏԱԿ»-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին և խորհրդատվություններին:

«MS Teams» հարթակում ուսուցիչների մեծ մասը ներառված են «ԿԶՆԱԿ»-ի կողմից ստեղծված խմբերում, որտեղ ստանում են իրենց հարցերի պարզաբանումները:

Նոր ՀՊՉ-ով վերապատրաստումներից հետո մանկավարժական անձնակազմը թեմատիկ պլանավորումը 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում կատարել են կրթական նոր պահանջներին համապատասխան, ԲՏճՄ առարկաների մասնագետները հնարավորության սահմաններում իրականացնում են լաբորատոր աշխատանքներ՝ օգտագործելով առկա նյութատեխնիկական միջոցները:

Նյութատեխնիկական բազայի սղությունը առաջացնում է որոշակի խոչընդոտներ ՏՀՏ կիրառման և էլեկտրոնային տարբերակով դասապրոցես կազմակերպելու հետ կապված: Միաժամանակ, ավագ սերնդի ուսուցիչների մեծաթիվ լինելը և նոր մեթոդներով դասապրոցես կազմակերպելու պահանջները առաջացնում են որոշակի բարդություններ:

Հաշվի առնելով վերը ներկայացվածը՝ գտնում ենք, որ, այնուամենայնիվ առկա են որոշ խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի կրթական հաստատության որակի բարձրացմանը և ուսումնական բոլոր չափանիշների բարելավմանը:

Պայմանավորված մանկավարժական հիմնական կազմի տարիքային առանձնահատկություններով՝ դժվարություններ են առաջանում նորարարությունների, այդ թվում դասավանդման նոր մեթոդոլոգիայի և նոր տեխնոլոգիաների ներմուծման, յուրացման և կիրառման գործընթացում:

Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ գյուղական միջավայրի և համայնքի բնակչության, որոնց մաս է կազմում նաև կրթական հաստատության մանկավարժական կազմը, առօրյայի առանձնահատկությունները իրենց հետքն են թողնում մանկավարժական գործունեության կազմակերպման վրա: Սոցիալական առանձնահատկություններով է պայմանավորվում մանկավարժների ինքնակրթության կազմակերպման ցածր պատրաստակամությունը և մոտիվացիան:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ մասնագիտական, մեթոդական վերապատրաստումները հաճախ պահանջում են նաև ֆինանսական ներդրումներ, ինչը հիմնականում հանգեցնում է նման դասընթացներին մասնակցության պասիվությանը:

Հավելենք նաև, որ ամենի վրա իր բացասական ազդեցությունն է ունենում նաև որոշ դեպքերում կրթական հաստատությունից դուրս տեխնոլոգիաների անհասանելիությունը:

Մանկավարժական կազմի սուբյեկտիվ դժվարությունները բարդանում են զուգահեռաբար առկա նաև հանրակրթական հաստատության տեխնոլոգիական միջոցների սղությամբ:

Այսպես, գտնում ենք, որ ներկայացված բարդությունների հաղթահարման նպատակով պետք է կազմակերպել ՏՀՏ ոլորտի տիրապետման վերապատրաստումներ, հագեցնել նյութատեխնիկական բազան ժամանակակից տեխնոլոգյաներով, ինչը հնարավորություն կտա արդյունավետ և նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան դասապրոցես ունենալու: Բացի այդ, համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովումը հնարավորություն կընձեռի ուսուցիչներին իրենց պարտականությունները, այդ թվում՝ էլեկտրոնային մատենավարությունը կատարել սահմանված ժամկետներում, ինչպես նաև կապահովի ուսուցիչների մասնագիտական կատարելագործման գործընթացը: Ուսումնառության պատշաճ կազմակերպման նպատակով անհրաժեշտության դեպքում մանկավարժական կազմը պետք է ունենա հասանելիություն կրթական հաստատության տեխնիկական միջոցներին նաև հիմնական

աշխատաժամանակից հետո: Միևնույն ժամանակ պետք է իրականացվի ներկայացված խնդրահարույց հիմնահարցերի լուծման նկակտմամբ շարունակական մոնիթորինգ, որը կզուգակցվի խրախուսման և կոշտ հսկողության մեթոդներով:

Ինչ վերաբերում է վերապատրաստումներին և կամավոր ատեստացիային, ապա նշենք, որ չնայած այն հանգամանքին, որ մանկավարժական կազմը պարբերաբար մասնակցում է պարտադիր ատեստացիաներին, իսկ երկու ուսուցիչ մասնակցել է նաև կամավոր ատեստացիայի, գտնում ենք, որ կամավոր ատեստացիային պետք է ներգրավվել ավելի մեծ ուսուցիչների, ինչը նպաստի ոչ միայն մասնագիտական որակների բարձրացմանը, այլ նաև իր դրական ազդեցությունը կունենա նաև սոցիալական առումով:

Ինչևէ, թեև առկա բազմաթիվ խոչընդոտներին՝ դպրոցի ուսուցչական կազմը բավականին մոտիվացված է և պատրաստակամություն է հայտնում շարունակական կերպով զարգացնել իրենց և՛ մասնագիտական և՛ ՏՀՏ տիրապետման հմտությունները և կարողությունները:

## 1.3 ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի, կրթության, կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս դպրոցի առջև ծառացած խնդիրներին տալ համապատասխան լուծումներ, հաղթահարել առկա դժվարություններն և խոչընդոտները, ինչպես նաև հասնել կանխանշված նպատակների իրագործմանը: Վերոնշյալ մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս ձևավորել ժողովրդավար միջավայր միտված թափանցիկ և մասնակցային մշակույթի զարգացմանը, թույլ է տալիս դպրոցին ապահովել ավելի արդյունավետ ուսումնական գործընթաց, ապահովել որակյալ կրթություն և հաղթահարել առաջացող խնդիրները համատեղ ուժերով: Համակարգված աշխատանքի միջոցով կարելի է հեշտացնել տեղեկատվության փոխանակումը, կիսվել լավագույն փորձով, և ստեղծել համատեղ ուժեղ կողմերի վրա հիմնված համայնք, որն աշխատում է ընդհանուր նպատակների իրագործման համար: Նման համագործակցության կարևոր առավելություններից կարող ենք առանձնացնել հետևյալը.

**1. Հավելյալ ռեսուրսների օգտագործում**

Հնարավորություն է ստեղծվում առավել արդյունավետ օգտագործել հավելյալ թե՛ նյութական, թե՛ մարդկային ռեսուրսներ, ինչը օգնում է ապահովել որակյալ կրթություն եւ լուծել ֆինանսական եւ նյութական խնդիրները:

**2. Տեղեկատվության փոխանակում**

Համագործակցության միջոցով հնարավոր է դառնում տեղեկատվության արագ եւ արդյունավետ փոխանակումը, ինչը նպաստում է ուսումնական նորարարությունների ներդրմանը եւ լավագույն փորձերի կիրառմանը:

**3. Ծնողների ներգրավում**

Ծնողները դառնում են ավելի ակտիվ մասնակիցներ դպրոցի կյանքին, ինչը կարող է բարձրացնել աշակերտների ուսումնական մոտիվացիան եւ առաջադիմությունը, ինչպես նաև դրա շնորհիվ դպրոցը դառնում է նաև համայնքային կյանքի կենտրոններից մեկը:

**4. Սոցիալական աջակցություն**

Տարբեր կազմակերպությունների ներգրավումը օգնում է դպրոցին ապահովել սոցիալական աջակցության համակարգը, ինչի շնորհիվ հնարավոր է դառնում իրականացնել նաև սոցիալապես խոցելի աշակերտներին աջակցություն:

**5. Հանրության գիտակցություն**

Համագործակցության շնորհիվ բարձրանում է հանրության գիտակցությունը կրթության կարևորության վերաբերյալ, ինչը նպաստում է կրթության հանդեպ ավելի մեծ ուշադրության եւ ներդրումների ապահովմանը:

### 1.3.1 Համագործակցություն համայնքի հետ

Հանդիսանալով համայնքի ամենամեծ դպրոց՝ ուսումնական հաստատությունը սերտ կապի մեջ է գտնվում համայնքի ղեկավար աշխատակազմի հետ: Դպրոցն ակտիվ մասնակցություն ունի համայնքի կողմից կազմակերպվող և նախաձեռնվող բոլոր միջոցառումներին: Այսպես, աշակերտները և մանկավարժական կազմը պարբերաբար մասնակցում է ծառատունկների, շաբաթօրյակների, սպորտային միջոցառումների, տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներին:

Համայնքի աշխատակազմի ներկայացուցիչները ևս հրավիրվում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային-հետազոտական աշխատանքներ համայնքի առանձնահատկությունների, կարիքների բացահայտման ուղղությամբ (էկոլոգիական, բնապահպանական և այլ):

Միևնույն ժամանակ դպրոցը կատարում է համայնքապետարանի օրենքին չհակասող հանձնարարականները, մասնակցում, քննարկումների, մասնակցում մարզային կրթական անցուղարձին:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1. Դպրոցը համագործակցում է Լոռու մարզպետարանի աշխատակազմի, Լոռի Բերդի համայնքապետարանի, Ագարակի վարչական ղեկավարի, ՆԳՆ ոստիկանության բաժնի և ԱԻՆ-ի հետ, ովքեր ունենում են հանդիպումներ բարձր դասարանների աշակերտների հետ և հանդես են գալիս զեկույցներով ու տեսահաշվետվություններով: | 1. Ոստիկանության ծառայողների ներգրավվումը կարող է ունենալ նաև բացասական ազդեցություն վերջիններիս մոտ մանկավարժական մոտեցումների բացակայությամբ պայմանավորված հաշվի առնելով նաև հասարակության մեջ լայն տարածում ունեցող քրեական բարքերի ազդեցությունը: |

| | |
|---|---|
| 2. Համագործակցության շրջանակներում հնարավոր է դառնում լրացուցիչ ֆինանսական և այլ նյութական միջոցների ներգրավումը, ցուցաբերվում է աջակցություն դպրոցի տարբեր խնդիրների լուծման հարցում (շենքային պայմանների մասնակի վերանորոգում, բարեկարգում): 3. Համագործակցության շրջանակներում համայնքապետարանի կողմից իրականացվում է շրջանավարտների խրախուսում դրամական հատկացումներ տեսքով: 4. Հետազոտական աշխատանքների շրջանակներում համայնքի բնակիչներ հանդիսացող աշակերտները իրենք են առավել մանրամասն տեղեկանում համայնքի խնդիրների մասին և իրազեկում դրանց մասին համայնքին: 5. Համայնքի հետ համագործակցության շրջանակներում ուսումնական հաստատությունը դառնում է համայնքային կյանքի կենտրոններից մեկը: 6. Համագործակցության շրջանակներում իրականացվում է նաև սոցիալական աջակցություն ուսումնական հաստատության տարբեր դասարանների աշակերտներին: 7. Ուսումնական հաստատությունը համագործակցում է նաև ՆԳՆ ոստիկանության բաժնի և ԱԻՆ-ի, Ստեփանավանի N զորամասի և զինվորական կոմիսարիատի հետ, ովքեր | 2. Ներկայացված ծրագրերի սխալ ներկայացումը, մանկավարժական և հոգեբանական ասպետկների անտեսումը կարող է տպավորություն ստեղծել, որ դրանց նախատեսված են սոցիալապես անապահով խավի համար, ինչը բացասաբար կանդրադառնա դրանց նկատմամբ վերաբերմունքին: 3. Համայնքի կողմից կատարվող աջակցությունը չպետք է որևէ կերպ ազդի դպրոցի կառավարման, ուսումնական ընթացքի և զուտ կրթական պրոցեսի կազմակերպման, իրականացման և գնահատման նկատմամբ: 4. Համայնքի կողմից կազմակերպվող մշակութային, կրթական, սպորտային և սոցիալական ակտիվությունը խթանող այլ արտադպրոցական միջոցառումների սակավություն: 5. Համայնքի կողմից ուսումնական հաստատության աշակերտների համար իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերը սակավություն: |

| | |
|---|---|
| ունենում են հանդիպումներ բարձր դասարանների աշակերտների հետ և հանդես են գալիս զեկույցներով ու տեսահաշվետվություններով, ինչը նպաստում է օրինահպատակ վարքագիծ ունեցող օրինապաշտ քաղաքացի ձևավորելուն, կանխարգելում քրեական ենթամշակույթին հարող տարրերի տարածում է համայնքի դպրոցահասակ անդամների մոտ, իրազեկվում են քաղաքացիական պաշտպանության կանոնների մասին, նախնական զինվորական պատրաստության շրջանակներում ստացված գիտելիքները կարողանում են քննարկել նաև զինվորական գործի ներկայացուցիչների հետ, ձեռք են բերում նաև որոշ գործնական գիտելիքներ, ձևավորվում է պարտադիր զինվորական ծառայության սահմանադրական պարտականության կամավոր կատարման կամաարտահայտություն:<br>8. Պաշտպանության նախարարության հետ համագործակցության շրջանակներում աշակերտները կծանոթանան կազմակերպվող զինվորական ծառայությանը նպաստող ծրագրերին, որոնցից են օրինակ «Պատիվ ունեմ», «Պաշտպան հայրենյաց» և այլ ծրագրերը, դրա շնորհիվ ֆինանսական խոչընդոտների պատճառով բարձրագույն կրթությունից խուսափող երեխաները | |

| | |
|---|---|
| հնավարություն կստանան ստանալ բարձրագույն կրթություն առանց ֆինանսական բեռի, ինչը կնպաստի պետության պաշտանության ֆունկցիայի ամրապնդմանը: | |

### 1.3.2 Համագործակցություն կրթության ոլորտում կառավարման մարմիններ հետ

Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը: Դպրոցը կատարում է լիազոր մարմնի՝ Լոռու մարզպետարանի օրենքին չհակասող հանձնարարականները, մասնակցում է քննարկումների, մասնակցում մարզային կրթական անցուդարձին: Ուսումնական հաստատությունը գտնվում է սերտ համագործակցության մեջ նաև ՀՀ կրթության տեսչական մարմնի հետ, որոնց կողմից կատարվող ստուգումները և դրանց արդյունքների ուսումնասիրությունները նպաստում են դպրոցում առկա խնդիրների վերհանմանը, թերությունների շտկմանը:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1. Դպրոցը համագործակցում է լիազորված մարմնի, կրթության կառավարման մարմինների հետ և կատարում է ՀՀ օրենքներին համապատասխան հանձնարարականները:<br>2. Դպրոցի գործունեությունը վերահսկվում է լիազորված մարմնի կողմից, ինչը ապահովում է դպրոցի օրինաչափ և բնականոն գործունեությունը:<br>3. Մեթոդական աձակցություն, վերապատրաստում, նորարարություն, օրենսդրական կամ այլ մեթոդական քննարկումներ, փորձի փոխանակում, | 1. Միասնական չափանիշների քաղաքականության պայմաններում կարող են անտեսվել դպրոցի, համայնքի և ուսումնական ընթացքի կազմերպման առանձնահատկությունները:<br>2. Ժամանակակից կրթական համակարգի անընդհատական փոփոխությունները հնարավորություն չեն տալիս ամբողջապես յուրացնել նորարար մոտեցումները, իսկ դրանց վերաբերյալ իրազեկումները երբեմն բավարար չեն: |

### 1.3.3 Համագործակցություն ծնողական համայնքի հետ

Դպրոցի կայուն զարգացման հիմնարար երաշխիքներից մեկն է դպրոց-ծնող սերտ համագործակցությունը: Ծնողների՝ դպրոցական կյանքի կառավարման գործում ակտիվ ներգրավվածությունը իր դրական ազդեցությունն է ունենում ուսումնական գործընթացի կազմակերպման և աշակերտների առաջադիմության և արժեհամակարգի ձևավորման վրա: Ծնողները ունեն իրավունք և հնարավորություն համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ՝ իրենց երեխայի կրթության կազմակերպման հարցերով: Այս համագործակցությունը նպաստում է ուսումնական միջավայրի բարելավմանը և երեխաների անձնական ու ակադեմիական զարգացմանը:

Ուսումնական հաստատությունը ունի ձևավորված ծնողական խորհուրդ, որի անդամներն են դասարանների ծնողական կոմիտեների նախագահները: Ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպվում են ծնողական ժողովների, ինչպես առանձին քննրկումների և հանդիպումների միջոցով, որոնց ընթացքում ծնողները ունեն հնարավորություն ներկայացնելու իրենց առաջարկները, մտահոգությունները և դիտարկումները ուսումանական ընթացքի կազմակերպման վերաբերյալ: Կարող ենք արձանագրել, որ ծնողական խորհուրդը ունի իր մասնակցությունը կրթական հաստատության կյանքի կազմակերպման գործում, սակայն համայնքային կյանքի առանձնահատկություններով պայմանավորված նկատվում է նաև պասիվություն համագործակցության առումով:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1. Ծնողները մասնակցում են ուսւումնական հաստատության կյանքին, կառավարմանը, ուսումնական ընթացքի կազմակերպմանը, ինչը իր դրական ազդեցությունն է ունենում նաև աշակերտների առաջադիմության և կարգապահության վրա:<br>2. Համագործակցության շրջանակներում հնարավոր է դառնում դիտարկել խնդրները ոչ միայն մանկավարժական, այլ | 1. Գյուղական միջավայրի առանձնահատկություններով պայմանավորված ծնողների պասիվությունը:<br>2. Գույղատնտեսական աշխատանքներով պայմանավորված զբաղվածության պայմաններում դպրոցական կյանքին մասնակից դառնալու օբյեկտիվ դժվարությունը: |

| | |
|---|---|
| նաև ծնողի և համայնքի բնակչի տեսանկյունից: 3. Դպրոց-ծնող համագործակցության շրջանակներում հնարավոր է դառնում ընտանիքում առաջացող որոշ խնդիրների լուծմանը ուղղված աջակցությունը: | |

### 1.3.4 Համագործակցություն շահառու կազմակերպությունների հետ

Ուսումնական հաստատության մանկավարժական կազմը մասնակցում է ԿԶՆԱԿ և ԿՏԱԿ հիմնադրամների կողմից իրականացվող վերապատրաստումներին: Զուգահեռաբար համագործակցություն է ընթանում Գնահատման Թեստավորման Կենտրոնի հետ՝ քննական գործընթացների պատշաճ կազմակերպման և իրականցման կապակցությամբ: Ուսումնական հաստատությունը ակտիվ համակգործակցում է նաև «Ինտերակտիվ կրթություն», «Կանթեղ» կրթական կառույցների հետ, ինչպես նաև Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի հետ:

Դպրոցի հետ համագործակցող կազմակերպությունների շրջանակը ներկայացվում է ստորև աղյուսակում:

| Շահառու գործընկերներ | Գործունեության շրջանակը |
|---|---|
| 1. ՀՀ Լոռու մարզպետարան | Ֆինանսավորում |
| 2. «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ | Էլեկտրամատակարարում |
| 3.Ինտերակտիվ, ՎՊՀ, Կանթեղ կազմակերպություններ | Ուսուցիչների վերապատրաստում |
| 4. «Հարմոնիա» | Ինտերնետ կապի ապահովում |
| 5. Լոռի Բերդ համայնքապետարան | Աղբահանություն |
| 6. «Աննա Բունիաթյան» ԱՁ | Գործավարական փաստաթղթեր, կավիճ |
| 7. «Էմմա Մուրադյան» ԱՁ | Շինապրանք, տնտեսական ապրանք |
| 8. «Դավ Գրիգ» ԱՁ | Սննդամթերքի մատակարարում |

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|

| | |
|---|---|
| 1. Իրականացվում է համագործակցություն մենթոր դպրցի հետ։<br>2. Իրականացվում է համագործակցություն Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ։<br>4. Շահառու կազմակերպությունները դպրոցը ապահովում են այն ապրանքներով ու ծառայություններով, որոնց առկայությամբ է պայմանավորված դպրոցի ընթացիկ և բնականոն գործունեությունը։<br>5. Դպրոցը սերտ համագործակցում է ոլորտի կարևորագույն կառույցների հետ, որոնք են՝ ԿԶՆԱԿ, ԳԹԿ, ԿՏԱԿ և ՏՄԱԿ։ | 1.Դպրոցը չունի համագործակցություն ոլորտային հասարակական կազմակերպությունների հետ, ինչը պայմանավորված է տարածաշրջանում վերջիններիս պասիվությամբ։<br>2. Բացակայում են անհատ բարերարների ներդրումները, որոնց շնորհիվ հնարավոր կլինի բարեկարգել ուսումնական միջավայրը և խթանել կրթության զարգացմանը։<br>3. Ցածր է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը։<br>4. Բացակայում է միջազգային կառույցների հետ համագործակցության փորձը։ |

## 1.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՍԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ: Այդ մարմիններն են՝



Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:

## Կառավարման խորհուրդ.

Պետական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը սահմանվում է Կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի «Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեվավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հարամանով:

Կառավարման խորհուրդը գործում է կոլեգիալ, հավանություն է տալիս և վերահսկում է զարգացման ծրագրի կատարումը, քննարկում է ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, տալիս է հավանություն և ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատմանը, քննարկում է ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեությունը, հաստատում է իր աշխատակարգը և հաստատության կանոնադրությամբ ու խորհրդի ընտրության կարգի համաձայն՝ ընտրում է խորհրդի նախագահ, սերտ համագործակցում է տնօրենի հետ, հետևողական լինելով այդ գործունեության ճիշտ, նպատակային և արդյունավետ իրագործմանը:

Կառավարման խորհրդի և հաստատության տնօրենի համագործակցությունը վճռորոշ է արդյունավետ կառավարման և հաջող գործունեության համար: Այս համագործակցությունը երաշխավորում է, որ հաստատությունն առաջնորդվի ընդհանուր տեսլականով, ռազմավարական ուղղորդմամբ և ուժեղ առաջնորդությամբ:

Հաստատության կոեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է համագործակցային գործելաոճով: Նիստերի արդյունքում ընդունված որոշումները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհրդի աշխատանքները Կազմակերպում է խորհրդի նախագահը, խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ:

Նիստերն արձանագրվում են խորհրդի նախագահի կողմից առաջադրված և խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված կառավարման խորհրդի քարտուղարի կողմից:

Կառավարման խորհրդի գործունեությունը ապահովվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոններ, ինչպես նաև աշխատակիցների և աշակերտների վարքագծի կանոններ, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեն հաստատությունում առավել բարեվարք վարքագծի դրսևորման տեսանկյունից:
- Աջակցել է հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկել է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված միջոցառումների իրականացումը, լսել և քննարկել է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տվել եզրակացություն:
- Քննարկել է հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը և ներկայացրել է հաստատամման լիազոր մարմնին:

Դպրոցում արդյունավետ, թափանցիկ և հաշվետվողական կառավարման որակին ուղղված գործունեությունը պետք է հիմնվի մասնակցային սկբունքների վրա: Ելնելով այդ նպատակից պետք է խթանել դպրոցի խորհրդակցական մարմինների աշխատանքը, մանսավորապես մասնակցայի կրթության սկզբունքի համաձայն՝ դպրոցի կառավարման գործընթացի և կրթական ծրագրերի իրականացման անմիջական մասնակիցը պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ:

## Մանկավարժական խորհուրդ.

Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում, ձևավորվում է տնօրենի հրամանով մեկ ուսումնական տարի ժամկետով:

Մանկավարժական խորհրդի անվանական կազմը արձանագրվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում: Մանկավաժական խորհրդի գործունեությունը շատ ընդարձակ է:

Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամ են: Մանկավարժական խորհրդի կողմից երկու ներկայացուցիչ ընդգրկված է հաստատության կառավարման խորհրդի կազմում: Կարևորվում է այն, որ մանկավարժական խորհրդի նիստերը արձանագրվեն անճշտություններից խուսափելու համար: Այդ արձանագրությունները կազմվում է մշտական քարտուղարի կողմից, որի

բացակայության դեպքում ընտրվում է նոր քարտուղար: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվել են առնվազն երկու ամիսը մեկ անգամ: Սակայն իրավիճակային փոփոխության պայմաններում կարող են գումարվել նաև արտահերթ նիստեր: Ներդպրոցական ժողովրդավար՝ թափանցիկ, հաշվետվողական և մասնակցային կառավարման տեսանկյունից կարևոր է այն փաստը, որ մանկավարժական խորհրդի նիստերը բացեն:

Հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման գործում դպրոցի խորհրդակցական մարմին հանդիսացող մանկավարժական խորհուրդը իր իրավասությունների շրջանակներում քննարկում և որոշումներ է կայացնում ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերվող մի շարք առանցքային հարցերի վերաբերյալ, մասնավորապես.

Մանկավարժական խորհրդի այն նիստերին, որի ընթացքում քննարկվել են սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցեր, խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվել են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ:

Դպրոցի կանոնադրությամբ ամրագրված գործառույթների շրջանակում մանկավարժական խորհրդի նիստերում քննարկվել են հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ընդունակություններին համապատասխան, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման, խմբակների, ուսումնական կաբինետների ձևավորման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և այլ գործառույթերի հետ կապված հարցեր, ընդունվել են համապատասխան որոշումներ:

Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման առնչությամբ և այն ներկայացրել է տնօրենի հաստատմանը: Մանկավարժական խորհուրդը քննարկել է օրենքով, դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված մի շարք այլ հարցեր:

## Մեթոդական միավորներ.

Հաստատությունում գործում են մեթոդական միավորումներ որոնք 5-ն են՝

- դասվարական,
- հումանիտար,
- բնագիտական,
- օտար լեզուների,

- ինտեգրված առարկաներ:

Յուրաքանչյուրի աշխատանքը կազմակերպվում է տվյալ մեթոդմիավորման նախագահի և անդամների համագործակցությամբ:

Մեթոդական միավորումների գործունեության հիմնական խնդիրներն են՝

• մեթոդաբանության կատարելագործում, անցկացվող բոլոր ուսումնական պարապմունքների որակի և արդյունավետության բարձրացում,

• ղեկավարող և դասավանդող անձնակազմի մանկավարժական վարպետության բարձրացում,

• կրթական գործընթացի կազմակերպման և ապահովման կատարելագործում:

Վերոգրյալից հետևում է, որ մեթոդական միավորումների արդյունավետ գործունեությունը նպաստում է մասնագիտական որակների զարգացմանը, կրթական առաջավոր փորձի ներդրմանը և այլնին: Մեթոդական միավորման գործունեությունն անհրաժեշտություն է դպրոցի համար, քանի որ այն էական դերակատարություն ունի առարկաների դասավանդման մեթոդների կիրառման արդյունավետության, առանձին գործիքների տիրապետելու, մանկավարժական գործունության և ուսուցիչների մասնագիտական որակների զարգացման համար:

Մեթոդմիավորման նախագահը աշխատանքային տարեկան պլանով սահմանում է մեթոդական միավորների աշխատանքները, այնուհետև այն հավանության է արժանանում մանկավարժական խորհրդի կողմից և դպրոցի տնօրենի հրամանի հիման վրա դրվում է գործածության:

Մեթոդական միավորումների նիստերի ժամանակ քննարկվել են ուսուցիչների որակավորման բարձրացմանը վերաբերելի հարցեր, ինչպես բակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչների համար իրականացվել է նախապատրաստական աշխատանքներ ատեստավորման համար:

Մեթոդական միավորման նիստերին իրականացվել է մասնագիտական և մանկավարժականմեթոդական խորհրդատվություններ, կազմակերպվել են սեմինարներ և հրավիրվել են մի շարք խորհրդակցություններ, որոնց նպատակը եղել է ուսուցիչների իրազեկումն ու ուղղորդումը:

Մեթոդական միավորման նիստերին կատարվել է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում: Բացի այդ մի շարք առաջարկներ է ներկայացրել դպրոցի տնօրենին աշակերտների կարողությունների և գիտելիքների

զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված օլիմպիադաներ, մրցույթներ և այլ միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ:

Մեթոդական միավորներ նիստերին քննարկվել է փաստաթղթերի վարման կարգը, մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող և բազմաթիվ այլ հարցեր, նրանց ջանքերով է, որ դպրոցում կարող է բարձրանալ կրթության որակը, քանի որ նրանք պետք է ապահովեն նոր և առավել արդյունավետ մեթոդների ներմուծումը, դրանց կիրառումը, առաջավոր փորձի փոխանակումը և պարբերաբար կազմակերպվող խորհրդակցությունները:

### Ծնողական խորհուրդ.

Ծնողական խորհուրդները ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար: Ծնողական խորհրդի աշխատանքը վերահսկում է դպրոցի տնօրենի դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը: Ծնողական խորհրդի նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից:

Ծնողական խորհուրդը ևս մեծ դեր ունի երեխաների կրթության և դաստիարակության գործում: Խիստ կարևոր է ծնողական խորհրդի և ուսուցիչների համագործակցությունը, քանի որ երեխաների կրթությունը կարող է հաջողել միայն ծնողական խորհուրդի ուսուցիչներին աջակցության դեպքում:

Դպրոցի ծնողական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով: Հաշվի առնելով դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանը տարվա ընթացքում դասարանակն և համադպրոցական ժողովներ: Դրանց թիվը տարվա կտրվածքով կազմում են համապատասխանաբար՝ առնվազն չորս և առնվազն երկու անգամ:

Ծնողական խորհուրդը ցուցաբերել է իր ակտիվ մասնակցությոնը դպրոցական միջոցառումների կազմակերպմանը, աջակցել է ծնողներին ներգրավել աշակերտներին արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում: Ծնդողակն խորհուրդը մասնակցել է դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունների կազմման նպատակով ձևավորված հանձնաժողովի աշխատանքների իրականացմանը և համապատասխան հաշվետվությունների կազմմանը և այլն:

### Աշակերտական խորհուրդ.

Դպրոցի աշակերտական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով: Խորհրդը մշակել է աշխատանքային պլան, որին համապատասխան հրավիրել է իր նիստեր և իրականացնում է իր գործառույթները: Աշակերտական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը:

Աշակերտական խորհուրդը հանդես է եկել մի շարք առաջարկություններով ուղղված ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, դպրոցական միջոցառումների, համադպրոցական մրցույթներիմ սեմինարների և մի շարք ճանաչողական այցերի կազմակերպմանը:

Այսպիսով, աշակերտական խորհուրդը առանցքային դերակատար է ժողովրդավարական մշակույթի և արժեհամակարգի ամրապնդման համար, քանի որ ընդգրկված է դպրոցական կյանքին վերաբերելի որոշումներ ընդունման գործընթացում:

### Հոգաբարձուների խորհուրդ.

Թեև դպրոցը այս պահին չունի հոգաբարձուների խորհուրդ, սակայն մի շարք խնդիրների լուծման նպատակով, զարգացման ծրագրերին աջակցելու և մի շարք մարմինների ու կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ձևավորել դպրոցի հոգաբարձուների խորհուրդ: Խորհրդի կազմում խարող են ընդգրկվել դպրոցի ծավալած գործունեությամբ հետաքրքրված անձանց, բարերարների, տեղական իշխանության ներկայացուցիչների: Վերջիններս դպրոցի մի շարք խնդիրների լուծման ճանապարհին կարող են նպաստել ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի հզորացմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը: Որպես հիմանական նպատակ պետք է սահմանել լրացուցիչ ներդրումներ և նվիրատվություններ ձեռք բերելը՝ կամավոր ֆինանսավորողներից, որոնց թվում կարող են լինել նաև դպրոցի նախկին շրջանավարտները:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1. Դպրոցում գործում է միացյալ կառավարման խորհուրդ, որը պարտաճանաչ կերպով անցկացնում է նիստեր, քննարկում է դպրոցի գործունեությանը վերաբերող հարցեր, | 1. Ակտիվության և նախաձեռնողականության պակաս, կապված հասարակական հիմունքներով աշխատանքի հետ: |

| | |
|---|---|
| վերահսկողություն է իրականացնում դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ։<br>2. Կառավարման խորհրդի անդամների կողմից իրենց լիազորությունների շրջանակներում ակտիվ համագործակցություն։<br>3. Խորհրդի անդամները իրենց գործունեությունը իրականացնում են հանուն դպրոցի զարգացման։<br>4. Մանկավարժական խորհուրդը իր լիազորությունների շրջանակներում կազմակերպում և իրականացնում է համապատասխան գործունեություն։<br>5. Մանկավարժական խորհուրդը կազմված է դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողներից, ովքեր գործուն ներգրավվածություն ունեն նոր չափորոշիչներին համապատասխան կրթության կազմակերպման հարցում, իրականացնում են հերթական նիստեր և վեր հանում մանկավարժական համակազմի առջև ծառացած խնդիրներ։<br>6. Մասնակցային սկզբունքի հիման վրա դպրոցի կառավարում և համագործակցություն։<br>7. Ծնողական խորհուրդը կարևորագույն կապող օղակ է դպրոցի և ծնողների միջև, ներգրավված է ուսումնադաստիարակչական աշխատանքներում և պաշտպանում է սովորողների շահերը դպրոցում։ | 2. Խորհրդակցական մարմինների անդամների՝ միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ համագործակցության պակաս։<br>3. Աշակերտական խորհուրդի իրենց լիազորություններին իրազեկվածության պակաս։<br>4. Արտաքին կապերի ստեղծման փորձի պակաս։<br>5. Որոշ խնդիրների լուծման համար ոչ բավարար ռեսուրսների առկայություն։ |

| | |
|---|---|
| 8. Աշակերտական խորհուրդը երաշխավորում է սովորողների ազատ կամահայտության իրավունքը, հանդես է գալիս տարբեր նախաձեռնություններով, կազմակերպում և ակտիվ մասնակցում են միջոցառումներին:<br>9. Այս բոլոր մարմինները գործում են տնօրենի հետ սերտ համագործակցությամբ, ելնելով սովորողի շահերից, առաջին տեղում դնելով կրթության որակը և ուսումնական բարենպաստ միջավայրը:<br>10. Իրականացվում է խորհրդակցական մարմինների կառուցվածքային և պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի օրինակելի վարումը: | |

## 1.5 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ագարակի միջնակարգ դպրոցի նոր շենքը շահագործման է հանձնվել 2000-2001 թթ.



ուսումնական տարում:

| Դասասենյակ | 12 |
|---|---|
| Օժանդակ սենյակ | 1 |
| Նախնական զինվորական պատրաստվածության լսարան/դասասենյակ | 1 |
| Բազմամասնագիտական խմբի աշխատանքների համար սենյակ | 1 |
| Տնօրենի աշխատասենյակ | 1 |
| Ուսուցչանոց | 1 |

| | |
|---|---|
| Գրադարան | 1 |
| «Արմաթ» լաբարատորիա և ինֆորմատիկայի դասասենյակ | 1 |
| Ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիա | 1 |
| Մարզադահլիճ | 1 |
| Հանդիսությունների դահլիճ | 1 |
| Խոհանոց | 1 |
| Ճաշասենյակ | 1 |
| Սանհանգույց | 5 |

Դպրոցը ունի նորակառույց մարզադահլիճ, որը նախատեսվում է հանձնել շահագործման 2024 թվականի աշնանը:

Գրադարանի տարածքը նպատակային օգտագործման համար ունի բավարար պայմաններ, սակայն բացակայում է հարուստ գրադարանային ֆոնդը:

Դասասենյակներում առկա գույքը ենթարկվել են բնական մաշվածության և կարիք ունի նորացման: Դպրոցը յուրաքանչյուր տարի իր միջոցներով կատարում է կոսմետիկ վերանորոգումներ, սակայն այն բավարար չէ, և դպրոցը ամբողջովին կապիտալ վերաներոգման կարիք ունի: Առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, որը փակցված է միջանցքներում՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: Դպրոցը ապահովված չէ շուրջօրյա ջրամատակարարման համակարգով, ինչը դժվարեցնում է բնականոն գործընթացը:

Դպրոցը ունի ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիա, որոնք կահավորված են, սակայն ունեն լրացուցիչ հագեցվածության կարիք:

Ինչ վերաբերում է Արմաթ լաբորատորիային և ինֆորմատիկայի դասասենյակին, ապա վերջիններս ունեն տեխնիկական հագեցվածության կարիք:

Հանդիսությունների դահլիճը կահավորվել է դպրոցի հիմնադրման ժամանակ և կարիք ունի լրացուցիչ գույքի և վերանորոգման:

Դպրոցը ունի բակ, որը ցանկապատված է, ինչը ապահովում է աշակերտների անվտանգությունը և ազատ տեղաշարժը:

Դպրոցը ջեռուցվում է ընդհանուր ջեռուցման համակարգով, ինչը ապահովում է համաչափ՝ նորմայի սահմաններում ջերմաստիճան:

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|

| | |
|---|---|
| 1. Դպրոցի շենքի տեղակայումը հարմար է, գտնվում է գյուղի կենտրոնական մասում:<br>2. Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ սովորողների ազատ տեղաշարժման համար:<br>3.Դպրոցն ունի նորակառույց մարզադահլիճ:<br>4. Դպրոցում գործում է Արմաթ լաբորատորիա:<br>5. Դպրոցը ունի ընդհանուր ջեռուցման համակարգ:<br>6. Առկա է ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված առանձին սենյակ:<br>7. Առկա է սանհագույց նախատեսված մանկավարժների համար:<br>8. Դպրոցը ունի նախակրթարան:<br>9. Առկա է խմելու ջուր:<br>10. Դպրոցը ունի մեկ պրոյեկտոր:<br>11. Դպրոցը «Սնունդ» ծրագրի շրջանակներում ապահովում է տարրական դասարանների սնունդը:<br>12. Դպրոցը շենքը մեկ հարկանի է, ինչը հարմար է հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների համար:<br>13. Առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան, որը սահմանված կարգով հասանելի է մանկավարժներին և աշակերտներին: Դրանք փակցված են նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում տարհանման պլան-սխեմաների տեսքով՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: | 1. Դպրոցի շենքը վերջին տարիներին մասամբ ենթարկվել է կոսմետիկ վերանորոգման, սակայն ընդանուր շինությունը ունի հիմնանորոգման կարիք:<br>2. Թեև դպրոցի շենքը ցանկապատված է, սակայն ցանկապատը ունի վերանորոգման կարիք:<br>3. Դասասենյակների գույքը մաշված է:<br>4. Արմաթ լաբարատորիան և համակարգչային դասասենյակը միատեղված են:<br>5. Թեև դպրոցը ունի ընդհանուր ջեռուցման համակարգ, սակայն ձմռանը ջեռուցման համակարգը չի բավարարում և սենյակային ջերմաստիճանը ցածր նորմայից:<br>6. Դասասենյակների գույքը մաշված է:<br>7. Գրադարանի գրքերի ֆոնդը սակավ է:<br>8. ԿԱՊԿՈՒ աշակերտների համար չկան խելամիտ հարմարեցումներ և պայմաններ, այդ թվում՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների ազատ տեղաշարժը ապահովող պայմաններ:<br>9. Բացակայում է բուժկետը:<br>10. Դպրոցը չունի հրաձգարան:<br>11. Ուսումնական հաստատությունը ունի համակարգչային տեխնիկայի խիստ պակաս:<br>12. Առարկայական դասասենյակների նյութատեխնիկական բազան հին է:<br>13. Դպրոցը չունի սմարթ գրատախտակներ: |

| | |
|---|---|
| 14. Առկա են առանձնացված, վերանորոգված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար:<br>15. Առկա է քաղաքացիական պաշտպանվածության պլան և ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են պլանի գործարկում և վարժանքներ:<br>16. Դպրոցում աշխատում է նաև բակապահը, ով հետևում է բակի պահպանությանը և բարեկարգմանը: | 14. Բացակայում է միջին և բարձր դասարանների համար սնունդ ապահովող ճաշարանը:<br>15. Դպրոցը ապահովված չէ շուրջօրյա ջրամատակարարման համակարգով, սակայն առկա է ջրի կուտակման համակարգ:<br>16. Դպրոցի որոշ դասասենյակներում առկա չէ բավարար ցերեկային լուսավորություն, դրանք խոնավ են, ինչի հետևանքով կարիք է առաջանում ամենամյա վերանորոգման, որը կատարվում է համայնքապետարանի աջակցությամբ:<br>17. Առկա չէ ապաստարան:<br>18. Սանհանգույցները նույնպես կարիք ունեն հիմնանորոգման: |

**2. ՆՊԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դպրոցի զարգացման ծրագիրը նախնական աշխատանքային փաստաթուղթ է՝ հիմնված դպրոցի ներկայիս վիճակի վերլուծության, ՀՀ կրթության գիտության,մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած հանրակրթության զարգացման առաջնահերթությունների, որում նախապես պլանավորված են որոշակի գործողություններ և ներդրումներ, որոնք կհանգեցնեն ծրագրով սահմանված խնդիրների հաղթահարմանը և նպատակների իրագործմանը, ինչի շնորհիվ կունենանք դպրոց, որի առաքելությունն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի տաղանդները և հնարավորինս զարգացնել դրանք՝ ուղղորդելով դեպի պետության ամրապնդումը և տնտեսության զարգացումը, քաղաքացիներ, ովքեր օժտված են քննադատական, վերլուծական, նորարարական, ինքնուրույն և ստեղծագործական մտածողությամբ:

Այս պահին դպրոցի ամենամեծ հիմնախնդիրներից մեկը տիպային շենքի բացակայությունն է, և ըստ էության նպատակադրումներում պետք է առաջնային լինի հենց շենքի հարցը, բայց ելնելով դպրոցական նոր շենքի կառուցման մասին առկա Կառավարության որոշումից, ցանկանում եմ նպատակադրումներս կատարել հաշվի առնելով այդ փաստը, նպատակահարմար չէ այս պահին մեծ ֆինանսական միջոցների ներդրում ծրագրել հին շենքի բարեկարգման համար, այդ պատճառով ավելի ճիշտ է կենտրոնանալ մյուս ոլորտների վրա, իսկ շենքային պայմանները բարելավել այնքանով, որ ապահովված լինի սովորողների անվտանգ և հնարավորինս հարմարավետ ուսումնական միջավայրը: Սահմանված նպատակները ընդհանուր առմամբ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ են, բայց դրանցից բխող գործողություններն ու միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ, լինեն պարբերական, որպեսզի ապահովեն ակնկալվող արդյունքների տևական բնույթը:

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակն է պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա:

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները շարադրվել են՝ հիմնվելով մի քանի ելակետային դրույթների վրա: Ելնելով նշված նպատակներից, ինչպես նաև սովորողներին արդյունավետ ու արդիական կրթություն տալու անհրաժեշտությունից, պետք է՝

• ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեության համար,

• սովորողների և մանկավարժների արդյունավետ գործունեության համար ստեղծել բարենպաստ պայմաններ,

• ամրապնդել դպրոցի նյութատեխնիկական բազան,

• ձևավորել դպրոցի առանձին առարկայական դասասենյակներ, տեսադասարաններ,

• արդիականացնել դպրոցում կիրառվող տեղեկատվական համակարգերն ու ծրագրերը,

• ներմուծել նոր կրթական տեխնոլոգիաներ, մոդելներ, ՏՀՏ գնահատման գործիքներ,

• դպրոցն ապահովել որակական բարձր հատկանիշներով օժտված աշխատակազմով. համատեղ աշխատանքով աջակցել ուսուցիչների որակավորման տարակարգերի շնորհման գործընթացին, կամավոր ատեստավորման մասնակցության գործընթացին,

• կրթական գործընթացում մշտապես կիրառել ժամանակակից մեթոդներ,

• նպաստել սովորողների իրավական գիտակցության ձևավորմանը և զարգացմանը սովորողների մոտ ձևավորել կրթության և ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք և ձգտում,

• ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր սովորող, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կարողանա օգտվել իր հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայությունների դիմելու իրավունքից,

• դպրոցի կառավարման համակարգը, ինչպես նաև ծնողների, ուսուցչական անձնակազմի ու սովորողների միջև հարաբերությունները հանրության համար դարձնել առավել թափանցիկ,

• դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդակցական մարմիններին, հատկապես ծնողական և աշակերտական խորհուրդներին,

• նպատակաուղղված աջակցել ծնող-սովորող-ուսուցիչ (դպրոց) փոխհամագործակցության ամրապնդմանը,

• ձեռնարկել միջոցառումներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կրթական գործընթացը բարելավելու նոր հաջողություններ արձանագրելու ուղղությամբ:

Թվարկված խնդիրները լուծելու արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

• կապահովվի արդիական և որակյալ կրթություն, որի արդյունքում կավելանա հայրենասեր, հաջողակ և մրցունակ շրջանավարտների թիվը,

• կընդլայնվեն սովորողների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները,

• սովորողները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու համար,

• սովորողների մոտ կձևավորվի վերլուծական և քննադատական մտածողություն՝ ապահովելով ազատ քաղաքացու ձևավորումը,

• կբարելավվեն ուսուցիչների մասնագիտական որակները, կմեծանա վերջիններիս գործունեության արդյունավետությունը:

Ուսուցման գործընթացին զուգահեռ պետք է մեծ ուշադրություն դարձնել արտադասարանական և արտադպրոցական ուսուցմանը՝ ստեղծելով պայմաններ սովորողների հետաքրքրությունների ու նախասիրությունների բավարարման, ստեղծագործական, նախաձեռնողական կարողությունների և կիրառական հմտությունների զարգացման համար:

| ՆՊԱՏԱԿ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ***1. Աշակերտների՝ այդ թվում ԿԱՊԿ ունեցող անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար հարմարավետ, մատչելի և տրամադրող միջավայրի ստեղծում:*** | | | | | | |
| Խնդիրներ | Գործողություններ | Ընդհանուր ժամկետ | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Ռիսկեր | Ռիսկերի Կանխման Գործողություններ |
| **Բարելավել ուսումնական հաստատությ** | Ուսումնական հաստատության վերանորոգման և | 2024-2029 թթ. | Պետական բյուջեից | Ուսումնական հաստատությա ն | Ֆինանսական միջոցների սղություն, | Համագործակցելով վարչատնտեսական համակարգողի հետ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **ան ընդհանուր շենքային պայմանները, ձեռք բերել դպրոցական անհրաժեշտ գույք, ինչը կդարձնի ուսումնական հաստատությունը գեղագիտական առումով ավելի գրավիչ, իրականացնել դասասենյակների, լաբարատորիաների, և առարկայական դասասենյակների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ ըստ** | բարեկարգման ծրագրի մշակում, դրա ներկայացում լիազոր մարմնին (2024-2025թթ.):<br>Ուսումնական հաստատության վերանորոգում փուլային տարբերակով (2025-2029թթ.):<br>Շենքային պայմանների բերակարգում (2025-2029թթ.):<br>Ցանկապատի բարեկարգում (2025-2026թթ.):<br>Բակի բարեկարգում, ծաղկանոցի բարեկարգում: Համագործակցություն «Armenia Tree project» հասարակական կազմակերպությ | շարունակական | հատկացված միջոցներ:<br>Պետական բյուջեից հատկացված և խնայված միջոցներ:<br>Օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ:<br>Բարերարների և հովանավորների ներդրումներ:<br>Շրջանավարտների ներդրումներ:<br>Համայնքային աջակցություն:<br>Դոնոր կազմակերպությունների աջակցություն:<br>Լրացուցիչ վճարովի ծառայություններ | վերանորոգման ծրագրին համապատասխան տարեկան որոշակի նվազագույն թվով վերանորոգված դասասենյակներ:<br>Աստիճանաբար բարելավված շենքային ընդհանուր պայմաններ:<br>Հարմարավետ դասասենյակներ՝ գույքով ապահովված:<br>Մշտադիտարկման իրականացում և ֆինանսական հաշվետվությունների պարբերաբար տրամադրում: | անբավարարություն:<br>Բարերարների և ներդրողների բացակայություն:<br>Լիազոր մարմնի կողմից վերանորոգման իրականացման փուլային ծրագրի մերժում, ծրագրի հաստատման ձգձգում:<br>Կամավորների բացակայություն կամ անբավարարություն: | ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման պլանավորում, ինչի արդյունքում առաջացող խնայողությունները կօգտագործվեն դպրոցի բարեկարգման համար:<br>Համացանցային գործիքների և ներդրումներ իրազեկման արշավների միջոցով նոր բարերարների և այլ ներդրողների հետ կապերի հաստատում և համագործակցային միջավայրի ստեղծում:<br>Դպրոցի հետ մշտական կապի մեջ գտնվող շրջանատարտներից շրջանավարտների խորհուրդի ձևավորում, նրանց կողմից տրամադրվող հավելյալ աջակցությունների օգտագործում: Ծրագրի մերժման դեպքում համագործակցություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **անհրաժեշտու թյան:** | ան հետ ուսումնական հաստատության բակի բարեկագրման համար (2024-2026թթ.): Միջանցքներում ջեռուցման կետերի ավելացում (2025-2026թթ.): Դպրոցի արտաքին պատերի և տանիքի նորոգում ջերմակայունությ ան բարձրացման նպատակով (2025-2029թթ.): Գրադարանի վերանորոգման իրականացում(2026-2027թթ.): Դպրոցի բակում աղբի տեսակավորման | | ից առաջացած միջոցներ: Վերանորոգման աշխատանքների կազմակերպման հարցում օգնություն ցուցաբերող ֆիզիկական աշխատանք իրականացնող մարդկային ռեսուրսներ, կամավոր աշխատույժ: Դրամաշնորհայի ն ծրագրեր: «Armenia Tree project» հասարակական կազմակերպությ ան կողմից տրամադրվող բակի բարեկարգման համար անհրաժեշտ ծառեր: | Բարեկարգ և կանաչապատ բակի ձեռքբերում: Զրուցարանի ձեռքբերում: Հարմարավետ գույքով հագեցվածությո ւն: | | լիազոր մարմնի հետ, քննարկումների կազմակերպում, նոր ծրագրի կազմում: Կամավորների բացակայության պարագայում մոտիվացնող զրույցների և քննարկումների կազմակերպում, համայնքի հետ համագործակցելով խրախուսման միջոցների օգտագործում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համար աղբամանների տեղադրում: Համապատասխան աղբամանների տրամադրման համար լիազոր մարմնի և համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցություն էկոլոգիական ծրագրերի շրջանակներում (2024-2025թթ.):<br><br>Դպրոցական գույքի՝ այդ թվում աշակերտական աթոռների, սեղանների, գրապահարանների, ուսուցչական սեղանների, աթոռների, ուսուցչանոցների գույքի | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ձեռքբերում (2025-2029թթ.):<br><br>Հին գույքի վերանորոգում, թարմացում, երկրորդ կյանքի հաղորդում ձեռսուրսների բարեխիղճ օգտագործման նպատակով (2024-2029թթ.):<br><br>Բարեսպաստ եղանակին բացօթյա դասերի կազմակեպման նպատակով տաղավարի կազմակերպում (2026-2027թթ.):<br><br>Դպրոցում սանիտարահիգենիկ անհրաժեշտ պայմանների ապահովում, քաղաքացիական պաշտպանության նորմերին | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համապատասխան միջավայրի կազմակերպում (հակահրդեհային, լուսային, ջերմային) (2024-2026թթ.):<br><br>ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին համապատասխան շենքային պայմանների ապահովում: Ուսումնական հաստատության խնդիրների վերհանման նպատակով համագործակցություն ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների, ՏՄԱԿ-ի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ (2024-2026թթ.): | | | | | |
| **Ստեղծել նյութատեխնիկական հարուստ բազա, ձեռք բերել ՏՀՏ միջոցներ:** | Թարմացնել և արդիականացնել առկա սարքավորումները (2024-2029թթ.):<br><br>Ձեռք բերել համակարգիչներ, սմարթ գրատախտակներ, պրոյեկտորներ, տպիչներ (2024-2026թթ.):<br><br>Ձեռք բերել առարկայական լաբարատորիաների բնականոն գործունեության համար անհրաժեշտ նյութեր և տեխնիկական սարքավորումներ (2024-2026թթ.): | 2024-2029 թթ. | Պետական բյուջեից հատկացված միջոցներ:<br><br>Պետական բյուջեից հատկացված և խնայված միջոցներ:<br><br>Օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսկան միջոցներ:<br><br>Բարերարների և հովանավորների ներդրումներ:<br><br>Շրջանավարտների ներդրումներ: Համայնքային աջակցություն: | Տարեկան որոշակի նվազագույն քանակով համակարգիչների, այդ թվում՝ նոթբուքների, էլեկտրոնային սմարթ գրատախտակների, պրոյեկտորների, ինչպես նաև լաբարատոր սարքավորումների և այ անհրաժեշտ միջոցների ձեռքբերում:<br><br>Նյութատեխնիկական բազայի հագեցվածություն: | Ֆինանսական միջոցների սղություն, անբավարարություն:<br><br>Բարերարների և ներդրողների պասիվություն:<br><br>Նշված հիմնադրամների կողմից կազմակերպված մրցույթներին մասնակցության պասիվություն կամ հաջողությունների բացակայություն: | Համագործակցելով վարչատնտեսական համակարգողի հետ ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման պլանավորում, ինչի արդյունքում առաջացող խնայողությունները կօգտագործվեն նյութատեխնիկական բազայի ձեռքբերման համար:<br><br>Համացանցային գործիքների և ներդրումներ իրազեկման արշավների միջոցով նոր բարերարների և այլ ներդրողների հետ կապերի հաստատում և համագործակցային միջավայրի ստեղծում: Շրջանավարտների խորհուրդի կողմից |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Դոնոր կազմակերպությունների աջակցություն:<br><br>Լրացուցիչ վճարովի ծառայություններից առաջացած միջոցներ:<br><br>«Վիզուալ Հայաստան» հիմնադրամի կողմից կազմակերպվող մրցույցթներին մասնակցություն, որոնց հաղթողները ձեռք են բերում սմարթ գրատախտակներ:<br><br>«Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցություն, ինչի | Ձեռք բերված ժամանակակից ՏՀՏ միջոցներ: | | տրամադրվող հավելյալ աջակցությունների օգտագործում:<br><br>Նշված հիմնադրամների կողմից կազմակերպվող մրցույթներին մանկավարժական կազմի մասնակցության խրախուսում, աջակցություն՝ այդ թվում մրցույթին նախապատրաստման գործում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | շրջանակներում նույնպես ցուցաբերվում է նյութական օգնություն հանրակրթական հաստատության ը: | | | |
| **Միջին և բարձր դասարանի աշակերտների համար սնունդ ապահովող ճաշարանային տարածքի կազմակերպում:** | Միջին և բարձր դասարանների համար սննդի կետի տարածքի հատկացում (2025-2026թթ.):<br><br>Շինարարական նյութերի և անհրաժեշտ գույքի ձեռքբերում, վերանորոգման իրականացում, կահավորում (2025-2026թթ.):<br><br>Սննդի մատակարարման վերաբերյալ համապատասխան կազմակերպությ | 2024-2025 թթ. | Պետական բյուջեից հատկացված միջոցներ:<br><br>Պետական բյուջեից հատկացված և խնայված միջոցներ:<br><br>Օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ:<br><br>Համայնքային աջակցություն:<br><br>Կամավոր հիմունքներով գործող մարդկային | Սանիտարահիգիենիկ նորմերին և այլ պահանջներին համապատասխան սննդի կետի առկայություն:<br><br>Միջին և բարձր դասարանի աշակերտների համար սննդի ապահովում հանրակրթական հաստատության ներսում: | Ֆինանսական միջոցների սղություն, անբավարարություն:<br><br>Համայնքային աջակցության պասիվություն:<br><br>Կամավորների բացակայություն:<br><br>Պահանջներին համապատասխան տարածքի հատկացման անհնարինություն:<br><br>Աշակերտների քանակի փոքրաթիվ լինելու հանգամանքով | Համագործակցելով վարչատնտեսական համակարգողի հետ ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման պլանավորում, ինչի արդյունքում առաջացող խնայողությունները կօգտագործվեն դպրոցի բարեկարգման համար:<br><br>Շրջանավարտների խորհուրդի կողմից տրամադրվող հավելյալ աջակցությունների օգտագործում:<br><br>Համայնքի հետ համագործակցության ընդլայնում:<br><br>Տարածքի հատկացման հետ դժվարությունների |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ունների հետ պայմանագրերի կնքում (2025-2026թթ.):<br><br>Նշված գործողություննե րի իրականացում վարչատնտեսակ ան համակարգողի ակտիվ մասնակցությամբ: | | ռեսուրս տարածքի կազմակերման և վերանորոգման աշխատանքների կազմակերպման ը աջակցող: | | պայմանավորված սննդի մատակարարման կազմակերպություն ների հետ համագործակցությ ան դժվարություններ: | առաջացման պարագայում համայնքի հետ համագործակցություն և տարածքի ընդլայնում, ընդհուպ մինչև կցակառույցային տարածքի ստեղծում:<br><br>Սննդի մակատարարման պայմանագրերի կնքման վերաբերյալ ավելի բարենպաստ պայմանների առաջարկում, ինչը կշահագրգռի կազմակերպությունների ն համագոծակցելու ուսումնական հաստատության հետ: |
| **Ներառական կրթության լիարժեք կազմակերպմ ան համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:** | Կրթության առանձնահատու կ պահանջներ ունեցող երեխաների ուսուցման համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերում (2024-2026թթ.): | 2024-2027 թթ. շարունակ ական | Պետական բյուջեից հատկացված միջոցներ:<br><br>Պետական բյուջեից հատկացված և խնայված միջոցներ: | Կրթության առանձնահատ ուկ կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպմա ն լիարժեք պայմանների առկայություն (համապատաս | Ֆինանսական միջոցների սղություն, անբավարարություն:<br><br>Բարերարների և ներդրողների բացակայություն: | Համագործակցելով վարչատնտեսական համակարգողի հետ ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման պլանավորում, ինչի արդյունքում առաջացող խնայողությունները կօգտագործվեն դպրոցի բարեկարգման համար: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների ազատ տեղաշարժը ապահովող միջավայրի ստեղծում, այդ թվում՝ սահմանված պահանջներին համապատասխան թվով անվտանգ թեքահարթակների տեղադրում, սանհանգույցայի ն համապատասխան պայմանների ստեղծում (2024-2026թթ.): ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքներին համապատասխան շենքային պայմանների ապահովում | | Օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ:<br><br>Համայնքային աջակցություն:<br><br>Համագործակցություն «Լիարժեք կյանք» և «Վորլդ Վիժն» հասարակական կազմակերպությունների հետ ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսուցանման կազմակերպման հարցում: | խան տեխնիկական միջոցների, անվտանգ թեքահարթակների և առնվազն 1 հարմարեցված սանհանգույցի առկայություն):<br><br>Ներառակ կրթության արդյունավետության բարձրացում, առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների լիարժեք ինտեգրվածություն դպրոցի կյանքին և ուսումնական գործընթացին: | Լիազոր մարմնի պասիվություն:<br><br>ԿԱՊԿՈՒ աշակերտների պասիվություն դպրոցի կյանքին ինտեգրվելու հարցում:<br><br>Ուսումնական գործընթացին մասնակցելու մոտիվացիայի բացակայություն:<br><br>Դպրոց հաճախելու ֆիզիկական դժվարություն: Նման երեխաների ծնողների կողմից դրսևորվող պասիվություն, ինչը խոչընդոտում է ներառական կրթության լիարժեք կազմակերպանը:<br><br>Դժվարություններ շենքային պայմանների՝ | Համացանցային գործիքների և ներդրումներ իրազեկման արշավների միջոցով նոր բարերարների և այլ ներդրողների հետ կապերի հաստատում և համագործակցային միջավայրի ստեղծում:<br><br>Շրջանավարտների խորհուրդի կողմից տրամադրվող հավելյալ աջակցությունների օգտագործում:<br><br>Կարիքավոր երեխաների ընտանիքների հետ զրույցների և քննարկումների կազմակերպում, հոգեբանական աջակցության ցուցաբերում:<br><br>Համագործակցություն ՏՄԱԿ- հետ ներառական կրթության կազմակերպամնը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | (օրինակ՝ դռների լայնքի մեծացում, շենքի ներսում թեքահարթակներ ի տեղադրում) (2024-2026թթ.):<br><br>Ուսումնառությունը տնային պայմաններում կազմակերպելու կարիք ունեցող աշակերտների համար նման կարգով դասավանդման կազմակերպում (2024-2025թթ. շարունակական):<br><br>Ուսումնական հաստատության խնդիրների վերհանման նպատակով համագործակցություն ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությ | | | | հենաշարժողական խնդիր ունեցող աշակերտների կարիքներին համապատասխանեցնելու գործում: | օգնություն ցուցաբերելու հարցում:<br><br>Համայնքի հետ սերտ համագործակցություն շենքային պայմանների բարելավման գործընթացին աջակցելու գործում:<br><br>Հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների ուսումնական գործընթացը դպրոցում կազմակերպելու դժվարության պարագայում մանկավարժների կողմից տնայցերի իրականացում և հեռավար ուսուցման կազմակերպում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ունների, ՏՄԱԿ-ի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ (2024-2029թթ. շարունակական): | | | | | |
| **«Ինֆորմատիկա» առարկայի դասավանդման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով հագեցած առանձին դասասենյակի ձևավորում:** | Համակարգչային դասասենյակի առանձնացում Արմաթ ինժիներական լաբարատորիայից (2025-2026թթ.):<br><br>Տարածքի հատկացում, վերանորոգում (2025-2026թթ.):<br><br>Համակարգիչների, առնվազն մեկ սմարթ գրատախտակի և պրոյեկտորի | 2024-2026 թթ. | Պետական բյուջեից հատկացված միջոցներ:<br><br>Պետական բյուջեից հատկացված և խնայված միջոցներ:<br><br>Օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցներ:<br><br>Բարերարների և հովանավորների ներդրումներ: | Առնվազն 10-12 համակարգիչների, 1 էլեկտրոնային գրատախտակի, աշակերտական գույքով հարուստ համակարգչային սենյակի ձևավորում;<br><br>ՏՀՏ միջոցների արդյունավետ օգտագործում, սովորողների ՏՀՏ ոլորտում գործնական | Ֆինանսական միջոցների սղություն, անբավարարություն:<br><br>Բարերարների և ներդրողների բացակայություն:<br><br>Լիազոր մարմնի կողմից աջակցության պասիվություն:<br><br>Կամավորների բացակայություն կամ | Համագործակցելով վարչատնտեսական համակարգողի հետ ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման պլանավորում, ինչի արդյունքում առաջացող խնայողությունները կօգտագործվեն դպրոցի բարեկարգման համար:<br><br>Համացանցային գործիքների և ներդրումներ իրազեկման արշավների միջոցով նոր բարերարների և այլ ներդրողների հետ կապերի հաստատում և |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ձեռքբերում (2025-2026թթ.):<br><br>Դասասենյակի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում (2025-2026թթ.): | | Շրջանավարտնե րի ներդրումներ:<br><br>Համայնքային աջակցություն;<br><br>Դոնոր կազմակերպությ ունների աջակցություն;<br><br>Լրացուցիչ վճարովի ծառայություններ ից առաջացած միջոցներ;<br><br>«Վիզուալ Հայաստան» հիմնադրամի կողմից կազմակերպվող մրցույցթներին մասնակցություն, որոնց հաղթողները ձեռք են բերում սմարթ գրատախտակնե ր: | հմտություններ ի ձեռքբերում:<br><br>Զարգացող հասարակակա ն կյանքին ինտեգրում: | անբավարարություն :<br><br>Պահանջներին համապատասխան տարածքի հատկացման անհնարինություն:<br><br>Նշված հիմնադրամների կողմից կազմակերպված մրցույթներին մասնակցության պասիվություն կամ հաջողությունների բացակայություն: | համագործակցային միջավայրի ստեղծում:<br><br>Շրջանավարտների խորհուրդի կողմից տրամադրվող հավելյալ աջակցությունների օգտագործում:<br><br>Կամավորների բացակայության պարագայում մոտիվացնող զրույցների և քննարկումների կազմակերպում, համանյքի հետ համագործակցելով խրախուսման միջոցների օգտագործում:<br><br>Շինարարական աշխատանքների նկատմամբ խիստ վերահսկողություն, ֆինանսական պարբերականհաշվետվո ւթյունների ներկայացում:<br><br>Տարածքի հատկացման հետ դժվարությունների առաջացման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցություն, ինչի շրջանակներում նույնպես ցուցաբերվում է նյութական օգնություն հանրակրթական հաստատությանը: Կամավոր հիմունքներով գործող մարդկային ռեսուրս տարածքի կազմակերման և վերանորոգման աշխատանքների կազմակերպմանը աջակցող: | | | պարագայում համայնքի հետ համագործակցություն և տարածքի ընդլայնում, ընդհուպ մինչև կցակառույցային տարածքի ստեղծում: |
| **Ուսումնադիդակտիկ պարագաների համալրում,** | Դասասենյակի կահավորում: Աշակերտատական սեղանների, | 2024-2026 թթ. | Պետական բյուջեից հատկացված միջոցներ: | Փուլային տարբերակով տարեկան նվազագույն | Ֆինանսական միջոցների սղություն | Համագործակցելով վարչատնտեսական համակարգողի հետ ֆինանսական միջոցների |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **լաբորատոր սարքավորումների և անհրաժեշտ նյութերի ձեռքբերում:** | աթոռների, գրատախտակների, ուսուցչի սեղանների գրապահարանների ձեռքբերում (2024-2026թթ.):<br><br>Հնամաշ գույքի փոխարինում նորով: Հնարավորություն դեպքում վերանորոգում և թարմացում (2024-2026թթ.):<br><br>Լաբարատոր սարքավորումների և անհրաժեշտ նույթերի ձեռքբերում (2024-2029թթ.):<br><br>Հանդիսությունների դահլիճի գույքի թարմացում, դպրոցի այլ գույքի ընդհանուր | | Պետական բյուջեից հատկացված և խնայված միջոցներ:<br><br>Օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսկան միջոցներ:<br><br>Բարերարների և հովանավորների ներդրումներ:<br><br>Շրջանավարտների ներդրումներ:<br><br>Համայնքային աջակցություն:<br><br>Դոնոր կազմակերպությունների աջակցություն:<br><br>Լրացուցիչ վճարովի ծառայություններ | քանակով սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան արդի կահավորանքով դասասենյակներ:<br><br>Գործնական գիտելիքներ ապահովող սարքավորումների առկայություն:<br><br>Աշակերտների համար հարմարավետ և հրապուրիչ միջավայր: | անբավարարություն:<br><br>Բարերարների և ներդրողների բացակայություն:<br><br>Կամավորների բացակայություն կամ անբավարարություն:<br><br>Ոչ որակյալ արդյունքի ստացում:<br><br>Համայնքային աջակցության պասիվություն: | Ճիշտ կառավարման պլանավորում, ինչի արդյունքում առաջացող խնայողությունները կօգտագործվեն դպրոցի բարեկարգման համար:<br><br>Համացանցային գործիքների և ներդրումներ հրազեկման արշավների միջոցով նոր բարերարների և այլ ներդրողների հետ կապերի հաստատում և համագործակցային միջավայրի ստեղծում:<br><br>Շրջանավարտների խորհուրդի կողմից տրամադրվող հավելյալ աջակցությունների օգտագործում:<br><br>Կամավորների բացակայության պարագայում մոտիվացնող զրույցների և քննարկումների կազմակերպում: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | թարմացում (2024-2029թթ.): | | ից առաջացած միջոցներ:<br><br>Վերանորոգման աշխատանքների կազմակերպման հարցում օգնություն ցուցաբերող ֆիզիկական աշխատանք իրականացնող մարդկային ռեսուրսներ, կամավոր աշխատույժ: | | | Համանյքի հետ համագործակցելով խրախուսման միջոցների օգտագործում: Ֆինանսական պարբերականհաշվետվո ւթյունների ներկայացում: |

| ՆՊԱՏԱԿ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *2. ՀՊՉ համատասխան կրթական գործընթացի իրականացում, արդի մարտահրավերներին համապատասխան ուսումնառության որակի բարձրացում:* | | | | | | |
| Խնդիրներ | Գործողություններ | Ժամկետ | Անհրաժեշտ միջոցներ | Արդյունքների չափման մեխանիզմներ | Ռիսկեր | Ռիսկերի<br><br>Կանխման<br><br>Գործողություններ |
| **Նոր չափորոշիչների ներդնում, առաջատար փորձի տեղայնացում ազգային և** | Դպրոցի բոլոր դասարաններում ապահովել նոր չափորոշիչների ամբողջական ներդնում և | 2024-2025 թթ.<br><br>շարունակ ական | Պետական բյուջեից հատկացված միջոցներ: | Ներդրված նոր չափորոշչի պահանջներին համապատասխ ան առարկայական | Ֆինանսական միջոցների սղություն, անբավարարությու ն, նյութատեխնիկակ | Համագործակցելով վարչատնտեսական համակարգողի հետ ֆինանսական միջոցների ճիշտ կառավարման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
